Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

20092

200

ՆՈՐ—ՋՈՒՂԱՅԻ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ, Գ.-ՔԱՆԱՆԵԱՆ ԵՒ Ս.-ԿԱՏԱՐԻՆԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ

ԵՒ

Գ.-ՔԱՆԱՆԵԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ

1914-1915 ՈՒՍՈՒՄՆ. ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

# ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

1915

ՏՊԱՐԱՆ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆԱՑ

ՋՈՒՂԱ—ՍՊԱՀԱՆ

Ն. Դ. ՄԻՆԱՍԵԱՆ

372
C-93

2010

372
G-93

2002

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ, ԳԷՈՐԳ-ՔԱՆԱՆԵԱՆ
ԵՒ Ս. ԿԱՏԱՐԻՆԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ

ԵՒ

ԳԷՈՐԳ-ՔԱՆԱՆԵԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ

1914—1915 *ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ*

1 9 1 5

*ՏՊԱՐԱՆ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆԱՑ*

ՋՈՒՂԱ—ՍՊԱՀԱՆ

Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

94009-42

2089-2002

1914—1915 ուսումնական տարին լրացած լինելով՝ գալիս ենք սոյն հակիրճ տեղեկագրով ներկայացնելու Նոր-Ջուղայի յարգելի հասարակութեան՝ մեր ազգային երկսեռ դպրոցների ու Գէորգ-Քանանեան Մանկապարտէզի կրթական վիճակի պատկերը։

ԴՊՐՈՑՆԵՐ

Որպէս յայտնի է Նոր-Ջուղայում ունենք երեք դպրոցներ՝ Կենտրոնական, Գէորգ-Քանանեան և Օրիորդաց Ս. Կատարինեան, և մի երկսեռ Մանկապարտէզ՝ Գէորգ-Քանանեան, որոնք գտնւում են Դպրոցական Վարչութեան ու Մանկավարժական Խորհուրդի խնամքի և հսկողութեան տակ։

Սոյն 1914—1915 ուսումնական տարում Մանկապարտէզն ունեցել է երեք բաժանմունքներ՝ Ա. Բ. և Գ։ Գէորգ-Քանանեան դպրոցն ունեցել է Ա. բաժանմունք (հիմնական և զուգընթաց), Բ բաժ. (հ. գ. և պատրաստական), Գ բաժ. (հ. գ. և պ.), Ա. դասարան (հ. գ. և պ.), և Բ դասարան, ընդ ամէնը՝ 12 դասարան։ Անցեալ տարի Ա. դաս. ունէր երկու բաժանմունքներ, իսկ այս տարի աշակերտ-աշակերտուհիների թիւը հասած լինելով 78-ի,ստիպուած եղանք մի նոր զուգընթաց ևս աւելացնել։

Կենտրոնական դպրոցն ունեցել է Գ. Դ. Ե. և Զ դասարաններ՝ թւով 4, իսկ Օր. Ս. Կատարինեան դպրոցը՝ Բ. Գ. Դ. Ե. և Զ. դասարաններ՝ թւով 5։ Երեք դպրոցներում ունեցել ենք ընդ ամէնը 24 դասարաններ՝ հաշուի առնելով նաև Մանկապարտէզը։

Յիշեալ բաժանմունքներն ու դասարաններն՝ ըստ սենեակների յարմարութեան և աշակերտների թւերին, զետեղուած են եղել երեք դպրոցներում այսպէս.

Կենտրոնական դպրոցում՝ Գ բաժ. (գ,) Ա. դաս. (հ.),

Բ. Գ. Դ. Ե. և Զ դասարաններ՝ թւով 7։ Ս. Կատարինեան դպրոցում՝ Բ. և Գ բաժ. (հ.), Ա. դաս. (գ.), Բ. Գ. Դ. Ե. և Զ. դասարաններ՝ թւով 8։ Իսկ Գ.-Քանանեան դպրոցում՝ Մանկապարտէզի Ա.. Բ. և Գ. բաժանմունքներ, Ա.. բաժ. (հ. և գ.), Բ բաժ. (գ. և պ.), Գ բաժ. (պ.) և Ա. դաս, (պ.)՝ թւով 9։

## ՈՒՍՄԱՆ ՇՐՋԱՆ

Համաձայն տպագրուած ծանուցագրերի՝ այս տարի ազգային դպրոցները բացուեցան 1914 թիւ Օգոստոսի 18-ին. մի քանի օր տևեցին աշակերտ-աշակերտուհիների ընդունելութիւնը, վերաքննութիւնները, փոխադրութիւնները և դասագրքերի բաժանումը, իսկ կանոնաւոր պարապմունքները սկսուեցին Օգոստոսի 21-ից։

Դասերը սկսւում էին Օգոստոս ամսին առաւօտեան ժամը 7.30-ին և տևում էին մինչև ժամը 12-ը. Սեպտեմբերի 1-ից սկսւում էին ժամը 8.30-ին և վերջանում էին ժամը 2.5-ին՝ կէսօրից յետոյ, իսկ Մայիս և Յունիս ամիսներին նոյն կարգով ինչպէս Օգոստոս ամսում։

Տարուայ ընթացքում իւրաքանչիւր դասի տևողութիւնը 45 րոպէ է եղել։ Երկսեռ դպրոցներում ունեցել ենք օրական 5 դաս, իսկ Շաբաթ օրերը՝ 4 դաս։ Ա. բաժանմունքներն ու Մանկապարտէզի սաներն ունեցել են օրական 4 դաս, իսկ Շաբաթ օրերը՝ 3 դաս, ինչպէս եղել է նախորդ տարիներում։

Դպրոցներում դասերը դադարել են Յունիս 10-ին, իսկ Զ. դասարանում Մայիս 1-ին, որպէսզի այս դասարանի աշակերտ-աշակերտուհիներն ազատ ժամանակ ունենային աւարտական քննութիւնների համար պատրաստուելու։ Դասեր չեն եղել Ծննդեան տօնին՝ երկու շաբաթ, բարեկենդանին՝ մի շաբաթ, Զատկին՝ երկու շաբաթ և մի քանի սրբոց տօն օրերին։



## ՈՒՍՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Այս տարի համաձայն Մանկավարժական Խորհրդի որոշման, կատարել ենք հետևեալ փոփոխութիւնները մեր դպրոցների ուսման ծրագրի մէջ.

1. Կենտրոնական և Ս. Կատարինեան դպրոցների Ե. և Զ դասարաններում մտցրել ենք կրօնի և եկեղեցական պատմութեան համար շաբաթական մի մի դաս։ Ե դասարանում իբրև դասագիրք ծառայել է Երզնկեանց քահանայի «Բարոյագիտութիւն». իսկ Զ դասարանում գործ ենք ածել Մաղաքիա Օրմանեան Սրբազանի «Եկեղեցի հայոց» գրքերը։
2. Վեցերորդ դասարանում մտցրել ենք Մաթեմատիկայի գործնական Երկրաչափութիւն (Մէնսուրէշըն) ճիւղն ևս, որի համար նշանակել ենք շաբաթական մի դաս։ Իսկ Ե դասարանի թւաբանութեան շաբաթական մի դասը բարձրացրել ենք երկուսի, և աւելացրել ենք՝ միայն տղայոց դպրոցում, Տոմարակալութեան համար շաբաթական երկու դաս։
3. Վերացրել ենք Անգլիոյ պատմութիւնը Հինգերորդ դասարանում, ըստ որում նպատակին չէր ծառայում, և դրա փոխարէն Անգլերէն դասերի թիւն աւելացրել ենք։
4. Յարմարաւոր ուսուցիչ չունենալու պատճառով, ստիպուած եղանք այս տարի վերացնել Մանկավարժական դասախօսութիւնները Զ դասարաններում։

## ԱՇԱԿԵՐՏ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐԻ ԹԻՒԸ

Տարուայ սկզբին երեք դպրոցների ու մանկապարտէզի աշակերտների թիւն եղել է 520, Յունուարին՝ 566, իսկ Յունիսին՝ 576, որն երեք դպրոցների ու մանկապարտէզի վրայ բաժանուած է այսպէս, Գ.-Քանանեան մանկապարտէզ՝ 148, Գ.-Քանանեան դպրոց՝ 334, Կենդրոնական դպրոց՝ 36 և Ս Կատարինեան դպրոց՝ 58։

Երեք դպրոցների 428 սաներից ձրիապէս զգեստ ու դասարանական պիտոյք են ստացել. Ն.-Ջուղայի Աղքատախնամ Արկեղ Վարչութիւնից՝ 104 հոգի, իսկ Ն.-Ջուղայի Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնից՝ 105 հոգի. Թօշակատու են՝ 125-ը, իսկ ձրիավարժ՝ 303-ը, Նոր-Ջուղայեցի՝ 349-ը, իսկ օտար վայրերից ու գաւառացի՝ 79-ը, հարուստ ծնողների զաւակ՝ 32-ը, միջակ կարողութեան տէր անձանց զաւակ՝ 175 ը, իսկ չունևոր ծնողների զաւակ՝ 221-ը։ Երեք դպրոցներում տղաների ընդհանուր թիւն է՝ 217, իսկ աղջիկներինը՝ 211։

Աշակերտ-աշակերտուհիների առողջապահական վիճակն ընդհանրապէս եղել է շատ գոհացուցիչ։ Չեն եղել ծանր կամ տարափոխիկ հիւանդութիւններ։

Յաջորդ ցուցակը ցոյց է տալիս սոյն ուսումնական տարուայ երեք դպրոցների ու մանկապարտէզի աշակերտ-աշակերտուհիների դասարանական և ընդհանուր թիւն իւրաքանչիւր ամսում։

## ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Տարակոյս չ՚կայ որ աշակերտի յառաջադիմութեան գըլխաւոր պայմաններից մէկն էլ դասերին կանոնաւոր յաճախելն է։ Մեր դպրոցների աշակերտ-աշակերտուհիներից կան այնպիսիները՝ որոնք դասերից շատ են բացակայել, և քննութիւնը ցոյց է տուել որ բացակայութիւնների մեծագոյն մասի պատճառը եղել է սնոտի և անհիմն։ Ծնողների լուրջ ուշադրութիւնը հրաւիրում ենք այս տխուր երևոյթի վրայ։ Ծնողները պէտք է լուրջ կերպով հոգ տանեն, որ իրանց զաւակները կանոնաւոր կերպով յաճախեն դպրոց և իզուր չ՚բացակայեն դասերից, որպէս զի երեխաների յառաջադիմութեան գործը չ՚վնասուի, թէև պէտք է խոստովանել, որ այս տարուայ բացակայութիւնը համեմատած նախկին տարիների հետ որոշ չափով նուազել է։

## ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ, ԳԷՈՐԳ ՔԱՆԱՆԵԱՆ, Ս. ԿԱՏԱՐԻՆԵԱՆ ԵՐԻՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԵՒ Գ.-ՔԱՆԱՆԵԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ 1914—1915 ՈՒՍՈՒՄ. ՏԱՐՈՒԱՅ ԱՇԱԿԵՐՏ-ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՒԸ։

| Դպրոցներ | Պատրաստական բաժանմունքներ և Դասարաններ. | Աշակերտ-Աշակերտուհեաց Ընդհանուր թիւ | Օգոստոս | | | Սեպտեմբեր | | | Հոկտեմբեր | | | Նոյեմբեր | | | Դեկտեմբեր | | | Յունուար | | | Փետրուար | | | Մարտ | | | Ապրիլ | | | Մայիս | | | Յունիս |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Նորեկներ | Դուրս թողածներ | Ընդհանուր թիւը ամսավերջին | Ընդհանուր թիւ | Նորեկներ | Դուրս թողածներ | Ընդհանուր թիւ | Նորեկներ | Դուրս թողածներ | Ընդհանուր թիւ | Նորեկներ | Դուրս թողածներ | Ընդհանուր թիւ | Նորեկներ | Դուրս թողածներ | Ընդհանուր թիւ | Նորեկներ | Դուրս թողածներ | Ընդհանուր թիւ | Նորեկներ | Դուրս թողածներ | Ընդհանուր թիւ | Նորեկներ | Դուրս թողածներ | Ընդհանուր թիւ | Նորեկներ | Դուրս թողածներ | Ընդհանուր թիւ | Նորեկներ | Դուրս թողածներ | Ընդհանուր թիւ |
| Գէորգ-Քանանեան Վարժ. | Ա. բաժանմ. (Հիմնական) | 33 | | | 33 | 33 | 1 | 1 | 33 | 2 | | 35 | 2 | | 37 | | | 37 | 1 | | 38 | 1 | | 39 | | 1 | 38 | | | 38 | | | 38 |
| | Ա. բաժանմ, (զուգընթաց) | 34 | | | 34 | 34 | | | 34 | 2 | | 36 | 1 | | 37 | | | 37 | 1 | | 38 | | | 38 | | | 38 | 1 | 1 | 38 | | 1 | 37 |
| | Բ. բաժանմ. (Հիմնական) | 20 | 1 | | 21 | 21 | | 1 | 20 | 1 | | 21 | | | 21 | | | 21 | | | 21 | | | 21 | | | 21 | | 1 | 20 | | | 20 |
| | Բ. բաժանմ. (զուգընթաց) | 23 | 1 | 1 | 23 | 23 | 2 | | 25 | 1 | | 26 | 1 | | 27 | | | 27 | | 1 | 26 | | | 26 | | | 26 | | | 26 | | | 26 |
| | Բ. բաժանմ. (պատրաստակն) | 25 | | | 25 | 25 | 1 | 1 | 25 | 3 | | 28 | | | 28 | | | 28 | | | 28 | | | 28 | | | 28 | | | 28 | | | 28 |
| | Գ. բաժանմ. (Հիմնական) | 29 | | | 29 | 29 | | | 29 | | 1 | 28 | 1 | | 29 | | | 29 | | | 29 | | | 29 | | | 29 | | | 29 | | | 29 |
| | Գ. բաժանմ. (զուգընթաց) | 28 | 3 | | 31 | 31 | | 2 | 29 | | | 29 | 1 | | 30 | | 1 | 29 | | 1 | 28 | | | 28 | | | 28 | | | 28 | | | 28 |
| | Գ. բաժանմ. (պատրաստակն) | 29 | | | 29 | 29 | 3 | 1 | 31 | 1 | | 32 | | | 32 | | | 32 | 1 | | 33 | | | 33 | 1 | | 34 | | | 34 | | | 34 |
| | Ա. դասարան (Հիմնական) | 32 | | 4 | 28 | 28 | | | 28 | | 1 | 27 | 1 | | 28 | 1 | | 29 | | | 29 | | | 29 | | | 29 | | | 29 | | | 29 |
| | Ա. դասարան (զուգընթաց | 23 | | 1 | 22 | 22 | | 1 | 21 | | | 21 | | | 21 | | | 21 | | | 21 | | | 21 | | | 21 | | 1 | 20 | | | 20 |
| | Ա. դասարան (պատրաստակն) | 23 | | | 23 | 23 | | | 23 | | | 23 | 1 | | 24 | | | 24 | | | 24 | | | 24 | | | 24 | | 1 | 23 | | | 23 |
| | Բ. դասարան | 23 | 1 | 1 | 23 | 23 | | | 23 | | | 23 | | | 23 | | | 23 | | | 23 | | | 23 | | | 23 | | 1 | 22 | | | 22 |
| Կենտր. Վարժ. | Գ. դասարան | 15 | | 1 | 14 | 14 | | | 14 | | | 14 | | | 14 | | | 14 | 1 | | 15 | | 1 | 14 | | 1 | 13 | | | 13 | | | 13 |
| | Դ. դասարան | 13 | | 1 | 12 | 12 | | | 12 | | 1 | 11 | | | 11 | | | 11 | 1 | | 12 | | | 12 | | | 12 | | | 12 | | | 12 |
| | Ե. դասարան | 10 | | 1 | 9 | 9 | | | 9 | | | 9 | | | 9 | | | 9 | 1 | 1 | 9 | | | 9 | | | 9 | | | 9 | | | 9 |
| | Զ. դասարան | 2 | | | 2 | 2 | | | 2 | | | 2 | | | 2 | | | 2 | | | 2 | | | 2 | | | 2 | | | 2 | | | 2 |
| Ս. Կատարին. Օրիորդաց Վարժ. | Բ. դասարան | 20 | | 2 | 18 | 18 | | | 18 | | | 18 | | | 18 | 1 | | 19 | | 2 | 17 | | | 17 | | 1 | 16 | | | 16 | | | 16 |
| | Գ. դասարան | 17 | | 1 | 16 | 16 | 1 | | 17 | | | 17 | | | 17 | | | 17 | | | 17 | | | 17 | | | 17 | | 2 | 15 | | | 15 |
| | Դ. դասարան | 15 | | | 15 | 15 | | | 15 | | | 15 | | 1 | 14 | | | 14 | | | 14 | | | 14 | | 1 | 13 | | 1 | 12 | | | 12 |
| | Ե. դասարան | 6 | | | 6 | 6 | | | 6 | | | 6 | | | 6 | | | 6 | | | 6 | | | 6 | | | 6 | | | 6 | | | 6 |
| | Զ. դասարան | 10 | | 1 | 9 | 9 | | | 9 | | | 9 | | | 9 | | | 9 | | | 9 | | | 9 | | | 9 | | | 9 | | | 9 |
| Գ. Քանանեան Մանկապարտէզ. | Ա. տարի | 21 | 9 | | 30 | 30 | 10 | 2 | 38 | 6 | | 44 | 8 | | 52 | 4 | | 56 | 6 | | 62 | | | 62 | 10 | | 72 | 3 | | 75 | | 4 | 71 |
| | Բ. տարի | 37 | | | 37 | 37 | | 1 | 36 | | | 36 | | 1 | 35 | 2 | 1 | 36 | 2 | | 38 | | | 38 | | | 38 | | | 38 | | | 38 |
| | Գ. տարի | 32 | | | 32 | 32 | 2 | 1 | 33 | 2 | | 35 | 2 | 1 | 36 | 1 | 1 | 36 | 1 | | 37 | 2 | | 39 | | | 39 | | | 39 | | | 39 |
| | Ընդհանուր գումար | 520 | 15 | 14 | 521 | 521 | 20 | 11 | 530 | 18 | 3 | 545 | 18 | 3 | 560 | 9 | 3 | 566 | 15 | 5 | 576 | 3 | 1 | 578 | 11 | 4 | 585 | 4 | 8 | 581 | | 5 | 576 |

### Ծանօթութիւն

Օգոստոսին 1914 թիւ

| | |
|---|---|
| Երկսեռ դպրոցներում | 430 |
| Մանկապարտէզում | 90 |
| Համագումար | 520 |

Յունիսին 1915 թիւ

| | |
|---|---|
| Երկսեռ դպրոցներում | 428 |
| Մանկապարտէզում | 148 |
| Համագումար | 576 |

1915 թ. Յունիսին

Աշակերտուհեաց թիւը Օրիորդաց և Գէորգ Քանանեան դպրոցներում 211
Մանկապարտէզում 72 283

Աշակերտաց թիւը Կենտրոնական և Գէորգ-Քանանեան Դպրոցներում. 217
Մանկապարտէզում. 76 293

Ընդհանուր գումար 576

Աձաւասիկ բացակայութեան վիճակագրութիւնը.

| | | |
|---|---|---|
| Գ.-Քանանեան Մանկապարտէզ | 2641 | դասեր |
| Գ.-Քանանեան դպրոց | 22275 | » |
| Կենտրոնական » | 1182 | » |
| Ս. Կատարինեան » | 4694 | » |
| Համագումար՝ | 30792 | դասեր |

Եթէ 30792 բացակայած դասերի թիւը բաժանելու լինենք աշակերտ-աշակերտուհիների ընդհանուր թուի վրայ, իւրաքանչիւր աշակերտի բացակայութեան միջին թիւը կըլինի մօտաւորապէս 54։

## ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ

Մանկապարտէզն ունեցել է երեք տարուայ պարապմունքներ, որոնք յանձնուած են եղել օր. Մ. Սիմէօնեանին՝ Գ բաժանմունք, օր. Ե. Կիրակոսեանին՝ Բ բաժ. և օր. Հ. Հայրապետեանին՝ Ա. բաժ։ Մանկապարտէզում ընդունուել են 4-ից մինչև 7 տարեկան երեխաներ։

Մանկապարտէզում պարապմունքներն եղել են Ֆրէօբելեան մէթոդով՝ պարգևներ, գունաւոր թղթերով հիւսուածքներ, փոքրիկ աղիւսներով զանազան շինուածքներ, պարզ ձեռարհեստներ, թուղթ ծալել, ճիպոտների աշխատանք, երգեցողութիւն, հաշուել, պատմութիւն, հայրենագիտութիւն և այլն։

Ըստ նիւթական վիճակի՝ երեխաներն այսպէս են բաժանւում, հարուստի զաւակ՝ 6, միջակ կարողութեան տէր անձանց զաւակ՝ 75, իսկ չքաւոր ծնողների զաւակ՝ 67։ Սաներից 121 հոգի Նոր-Ջուղայեցի են, իսկ 27-ը՝ օտար վայրերից ու գաւառացի, 36-ը թոշակատու, իսկ 112-ը՝ ձրիավարժ, որոնց մեծի մասին տրուել է համազգեստ Նոր-Ջուղայի Աղքատախնամ Արկղից։

Երեխայոց համար չունենք առանձին ընդարձակ բակ ու պարտէզ, ուր փոքրիկ մանուկները հնարաւորութիւն ու-

նենալին ազատ խաղալ ու պարապել պարտիզպանական զբաղմունքներով, որ չափազանց հետաքրքիր, սիրելի և օգտակար են նրանց համար։

Հոգաբարձութեան կողմից այս տարի գնուած ու բերել են տրուած՝ մանուկների զբաղման համար, որոշ քանակութեամբ անհրաժեշտ նիւթեր, իրեղէններ, խաղալիքներ և այլն։

Մանկապարտէզի սաները՝ չնայած որ ունեցան և՛ իրանց համեստ բաժինը Նոր-Տարուայ դպրոցական Երեկոյթին, բայց և այնպէս նրանք աւելի մեծ չափով մասնակցութիւն ունեցան մեր ազգային դպրոցների Բարերար-Հիմնադիրների յիշատակին նուիրուած Գրական-Երաժշտական Երեկոյթի հանդէսին, որ տեղի ունեցաւ Կենտրոնական դպրոցի դահլիճում Ապրիլի 18-ին՝ մեծ ուրախութիւն պատճառելով իրանց ծնողներին ու հասարակութեան։

## ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄ

Այս տարի պաշտօնավարող բոլոր ուսուցիչ-ուսուցչուհիների թիւն եղել է 26։

Տարուայ սկզբին հրաժարուած մի քանի ուսուցիչների ու վարժուհիների փոխարէն պաշտօնի հրաւիրուեցան օրիորդք Լ. Խաչիկեան, Ի. Խաչիկեան, Ա. Տէր Նիկողայոսեան, Լ. Տէր Կիւրեղեան, Հ. Առաքելեան և Հ. Հայրապետեան և պ. պ. Եղիա Դաւթեան և Յովսէփ Աբգարեան։ Նոյեմբերի սկզբին հրաժարուեց իր պաշտօնից պ. Լ. Ղուկասեանը և նրա տեղ վարձուեց պ. Ղ. Մարտիրոսեանը։

Հայերէն լեզուի համար՝ Դպրոցների Վարչութիւնը նախապէս հրաւիրել էր Էջմիածնից երկու ուսուցիչներ՝ որոնք համաձայնել էին գալ ժամանակին ստանձնելու իրանց պաշտօնը, սակայն դպրոցների բացուելուց մի-երկու շաբաթ յետոյ, նրանք՝ երկուսն էլ, հեռագրով յայտնեցին թէ գալու չեն այլեւս։ Վարչութիւնը յետոյ աշխատեց Ն.-Ջուղայում պայմանաւորուել պ. Յ. Դաւիթխանեանցի հետ, բայց սա էլ չհամաձայնեց։ Սրանից յետոյ Վարչութիւնը յարմար իմա-



ցաւ բարձրագոյն դասարանների՝ (Ե. և Զ.) հայերէն լեզուի առարկան յանձնել պ. Ա. Աթայեանին, որ յանձն առաւ՝ Հոկտեմբեր ամսից սկսեալ, շաբաթական տասը դասեր աւանդել ու ղեկավարել երգեցիկ խումբը։

Ներկայ 1914—1915 Ուսումնական տարում պաշտօնավարող դասատուների աւանդած շաբաթական դասերի ցուցակը հետեւեալն է։

### 1. Աբգարեան պ. Յովսէփ —29 դաս.

| | | | |
|---|---|---|---|
| Թուաբանութիւն | Բ գ. աղջ. 5 | Աշխարհագրութ. | Դ գ. աղջ. 2 |
| » | Բ գ. տղ. 5 | » | Դ գ. տղ. 2 |
| » | Գ գ. աղջ. 4 | Անգլերէն | Դ գ. աղջ. 4 |
| » | Գ գ. տղ. 3 | | |
| » | Դ գ. աղջ. 2 | | |
| » | Դ գ. տղ. 2 | | |

### 2. Աբգարեան պ. Ստեփան— 24 դաս.

| | | | |
|---|---|---|---|
| Գործնական Երկրաչափ. | Զ գ. տղ. 1 | Երկրաչափ. | Ե գ. տղ. 2 |
| » » | Զ գ. աղջ. 1 | » | Ե գ. աղջ. 2 |
| Թուաբանութիւն | Ե գ. տղ. 2 | » | Զ գ. տղ. 2 |
| » | Ե գ. աղջ. 2 | » | Զ գ. աղջ. 2 |
| Ալգէբրա | Զ գ. տղ. 2 | Տումարականութիւն Ե. | |
| » | Զ գ. աղջ. 2 | | և Զ. գ. տղ. մ. 2 |
| » | Ե գ. տղ. 2 | | |
| » | Ե գ. աղջ. 2 | | |

### 3. Աբգարեան պ. Տիգրան— 28 դաս.

| | | | |
|---|---|---|---|
| Հայերէն | Գ գ. տղ. 4 | Ընդհան. պատմութ. | Դ գ. տղ. 2 |
| » | Գ գ. աղջ. 4 | » » | Դ գ. աղջ. 2 |
| » | Դ գ. տղ. 4 | Հայոց պատմութ. | Ա գ. հ. 2 |
| » | Դ գ. աղջ. 4 | » » | Ա գ. գ. 2 |
| Պարսկերէն | Ա գ. պ. 2 | » » | Բ գ. տղ. 2 |

### 4. Աքայեան պ. Արշակ— 10 դաս.

| | | |
|---|---|---|
| Հայերէն | Ե գ. տղ. | 3 |
| » | Ե գ. աղջ. | 3 |
| » | Զ գ. տղ. և աղջ. մ. | 3 |
| Խմբական երգեցողութիւն | | 1 |

### 5. Առաքելեան օր. Հայկանոյշ— 26 դաս.

| | | | |
|---|---|---|---|
| Հայերէն | Բ գ. աղջ. 5 | Բնական պատմութիւն | Ա. գ. հ. 3 |
| » | Ա գ. գ. 5 | » » | Ա գ. գ. 3 |
| » | Ա գ. պ. 5 | » » | Ա գ. պ. 3 |
| Նկարչութ. | Գ բ. պ. 2 | | |

### 6. Դաւթեան պ. Եղիա — 30 դաս.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Նկարչութիւն | Գ բ. գ. | 2 | Նկարչութիւն | Գ դ. տղ. | 1 |
| » | Ա դ. հ. | 2 | » | Գ դ. աղջ. | 2 |
| » | Ա դ. գ. | 2 | Թուաբանութիւն | Գ բ. գ. | 5 |
| » | Ա դ. պ. | 2 | » | Ա դ. հ. | 5 |
| » | Բ դ. տղ. | 2 | Անգլերէն | Բ դ. աղջ. | 5 |
| » | Բ դ. աղջ. | 2 | | | |

### 7. Դաւթեան օր. Աշխէն — 26 դաս.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Հայերէն | Գ բ. հ. | 5 | Երգեցողութիւն | Բ բ. հ. | 2 |
| » | Գ բ. գ. | 5 | » | Բ բ. գ. | 2 |
| » | Բ բ. հ. | 5 | » | Բ բ. պ. | 2 |
| Գրութիւն | Բ բ. հ. | 1 | » | Գ բ. հ. | 2 |
| | | | » | Գ բ. պ. | 2 |

### 8. Դաւթեան պ. Եփրեմ — 24 դաս.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ռուսերէն | Գ դ. տղ. | 3 | Հայերէն | Բ դ. տղ. | 5 |
| » | Դ դ. » | 3 | Հայրենագիտ. | Գ բ. հ. | 2 |
| » | Ե դ. » | 3 | » | Գ բ. գ. | 3 |
| » | Զ դ. » | 4 | » | Գ բ. պ. | 2 |

### 9. Իսրայէլեան օր. Եղիսաբեթ — 26 դաս.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Առտնին տնտեսութ. | Զ դ. աղջ. | 2 | Բնական պատմ. | Բ դ. տղ. | 3 |
| Թուաբանութիւն | Ա դ. գ. | 5 | » | Բ դ. աղջ. | 3 |
| Աշխարհագրութիւն | Ա դ. գ. | 2 | Անգլերէն | Գ դ. աղջ. | 5 |
| » | Ա դ. պ. | 2 | Երկրաչափութ. | Դ դ. աղջ. | 2 |
| » | Բ դ. աղջ. | 2 | | | |

### 10. Խաչիկեան օր. Իշխանուհի — 27 դաս.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Հայերէն | Բ բ. գ. | 5 | Գրութիւն | Բ բ. գ. | 2 |
| » | Բ բ. պ. | 5 | » | Բ բ. պ. | 2 |
| Թուաբանութիւն | Բ բ. պ. | 5 | Նկարչութիւն | Բ բ. պ. | 2 |
| Ընթերցանութիւն | Բ բ. հ. | 2 | » | Բ բ. հ. | 2 |
| » | Բ բ. գ. | 2 | | | |

### 11. Խաչիկեան օր. Լուսաբեր — 26 դաս.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Հայերէն | Գ բ. պ. | 5 | Իրազննութիւն | Բ բ. հ. | 2 |
| Թուաբանութիւն | Բ բ. գ. | 5 | » | Բ բ. գ. | 2 |
| Նկարչութիւն | Բ բ. գ. | 2 | » | Բ բ. պ. | 2 |
| » | Գ բ. հ. | 2 | Ձեռագործ | Բ բ. հ. | 2 |
| | | | » | Բ բ. գ. | 2 |
| | | | » | Գ բ. հ. | 2 |

### 12. Կարապետեան պ. Մկրտում — 27 դաս.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Անգլերէն | Բ դ. տղ. | 5 | Անգլերէն | Զ դ. տղ. | 5 |
| » | Գ դ. » | 4 | Աշխարհագրութ. | Բ դ. տղ. | 2 |
| » | Դ դ. » | 4 | » | Ա դ. հ. | 2 |
| » | Ե դ. » | 5 | | | |



### 13. Կիրակոսեան օր. Եղիսաբեթ — 23 դաս.

Աւանդել է Մանկապարտէզի Բ բաժանմունքի բոլոր առարկաները։

### 14. Հայրապետեան օր. Հեղինէ — 25 դաս.

Աւանդել է Մանկապարտէզի Ա բաժանմունքի բոլոր առարկաները և 2 դաս Ձեռագործ Բ բ. պ. դասարանում։

### 15. Մարտիրոսեան պ. Ղազարոս — 29 դաս.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ընդհանուր պատմ. | Գ դ. տղ. | 2 | Աշխարհագրութ. | Գ դ. տղ. | 2 |
| » » | Գ դ. աղջ. | 2 | » | Գ դ. աղջ. | 2 |
| Հայոց պատմութ. | Բ դ. աղջ. | 2 | Իրազննութիւն | Գ բ. հ. | 2 |
| Անգլերէն | Ա դ. հ. | 5 | » | Գ բ. գ. | 2 |
| » | Բ բ. հ. | 4 | » | Գ բ. պ. | 2 |
| » | Բ բ. պ. | 4 | | | |

### 16. Միրզա Մահմադ — 24 դաս.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Պարսկերէն | Գ բ. գ. | 3 | Պարսկերէն | Գ դ. տղ. | 3 |
| » | Գ բ. պ. | 3 | » | Դ դ. » | 3 |
| » | Ա դ. հ. | 3 | » | Ե դ. » | 3 |
| » | Բ դ. տղ. | 3 | » | Զ դ. » | 3 |

### 17. Յարութիւնեան պ. Արմենակ — 28 դաս.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ֆիզիկա | Դ դ. տղ. | 3 | Ընդհան. պատմութ. | Ե դ. տղ. | 2 |
| » | Դ դ. աղջ. | 3 | » » | Ե դ. աղջ. | 2 |
| » | Ե դ. տղ. | 3 | » » | Զ դ. տղ. և | |
| » | Ե դ. աղջ. | 3 | | աղջ. մ. | 2 |
| » | Զ դ. տղ. | 2 | Բնական պատմութ. | Գ դ. տղ. | 3 |
| » | Զ դ. աղջ. | 2 | » » | Գ դ. աղջ. | 3 |

### 18. Յովհաննիսեան Տէր Եսայի քհնյ. — 20 դաս.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Կրօնագիտութիւն | Դ դ. տղ. | 2 | Հայոց պատմ. | Գ դ. տղ. | 2 |
| » | Դ դ. աղջ. | 2 | » » | Գ դ. աղջ. | 2 |
| » | Ե դ. տղ. | 1 | » » | Դ դ. տղ. | 2 |
| » | Ե դ. աղջ. | 1 | » » | Դ դ. աղջ. | 2 |
| Եկեղեց. պատմութ. | Զ դ. տղ. | 1 | » » | Ե դ. տղ. | 2 |
| » » | Զ դ. աղջ. | 1 | » » | Ե դ. աղջ. | 2 |

### 19. Շուքուրեան պ. Պօղոս — 26 դաս.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Անգլերէն | Բ բ գ. | 4 | Անգլերէն | Ա դ. գ. | 5 |
| » | Գ բ. հ. | 5 | » | Ա դ. պ. | 5 |
| » | Գ բ պ. | 5 | Գրութիւն | Ա դ. գ. և պ. | 2 |

### 20. Սիմէօնեան օր. Համասփիւռ — 24 դաս.

Աւանդել է Ա (զուգընթաց) բաժանմունքի բոլոր առարկաները՝ 23 դաս և 1 դաս Ընթերցանութիւն Գ բ. հ. դասարանում։

### 21. Սիմէօնեան օր. Մարիամ — 23 դաս.

Աւանդել է Մանկապարտէզի Գ բաժանմունքի բոլոր առարկաները։

**22.** Վարդանեան Տէր Համբարձում քհնյ.— 26 դաս.

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Կրօնագիտութիւն | Բ | բ. | հ. | 2 | Կրօնագիտութիւն | Ա. | դ. | հ. | 2 |
| » | Բ | բ. | գ. | 2 | » | Ա. | դ. | գ. | 2 |
| » | Գ | բ | հ. | 2 | » | Ա. | դ. | պ. | 2 |
| » | Գ | բ. | գ. | 2 | Հայերէն | Ա. | դ. | հ. | 5 |
| » | Գ | բ. | պ. | 2 | Անգլերէն | Գ | բ. | գ. | 5 |

**23.** Վարդանեան օր. Մէրխաբուն— 25 դաս.

Աւանդել է (Ա. հիմնական) բաժանմունքի բոլոր առարկաները՝ 23 դաս և 2 դաս Ընթերցանութիւն Բ բ. պ. դասարանում։

**24.** Վարդանեան Տէր Վարդան քհնյ.— 24 դաս.

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ալգէբրա | Դ | դ. | տղ. | 2 | Կրօնագիտութիւն | Բ | դ. | տղ. | 2 |
| » | Դ | դ. | աղջ. | 2 | » | Բ | դ. | աղջ. | 2 |
| Անգլերէն | Ե | դ. | աղջ. | 5 | » | Գ | դ. | տղ. | 2 |
| » | Զ | դ. | աղջ. | 5 | » | Գ | դ. | աղջ. | 2 |
| | | | | | Հայոց պատմութ. | Ա. | դ. | պ. | 2 |

**25.** Տէր Կիւրեղեան օր. Լուսաբեր— 26 դաս.

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Կրօնագիտութիւն | Բ | բ. | պ. | 2 | Թուաբանութիւն | Ա. | դ. | պ. | 5 |
| Թուաբանութիւն | Բ | բ. | հ. | 5 | Ընթերցանութիւն | Դ | բ. | գ. | 2 |
| » | Գ | բ. | պ. | 5 | » | Բ | դ. | աղջ | 2 |
| » | Գ | բ. | հ. | 5 | | | | | |

**26.** Տէր Նիկողայոսեան օր. Աստղիկ— 25 դաս.

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ձեռագործ | Գ | բ. | պ. | 3 | Կար ու Ձև | | Գ | դ. | աղջ. | 1 |
| » | Ա. | դ. | գ. | 2 | » | » | Դ | դ. | » | 2 |
| » | Ա. | դ. | պ. | 2 | » | » | Ե | դ. | » | 2 |
| » | Բ | դ. | աղջ. | 2 | » | » | Զ | դ. | » | 2 |
| » | Գ | դ. | » | 2 | Գրութիւն | | Բ | բ. | հ. | 1 |
| » | Դ | դ. | » | 2 | | | | | | |
| » | Ե | դ. | » | 2 | | | | | | |
| » | Զ | դ. | » | 2 | | | | | | |

## ՊԱՇՏՕՆՆԵՐ

Ուսուցիչները՝ բացի դասատուութիւնից, կատարել են և՝ հետևեալ պաշտօնները։

պ. Ս. Աբգարեանը կառավարել է դպրոցների գրավաճառանոցը։ Դպրոցական Գրադարանապետի պաշտօնը վարել է օր. Լ. Տէր Կիւրեղեան։ Մանկավարժական ժողովի քարտուղարի պաշտօնը կատարել է պ. Ա. Յարութիւնեան։ Գ.-Բանանեան դպրոցում մշտական վերակացուի ու դպրոցների տնտեսի պաշտօնները՝ պ. Պ. Տուքուրեան։ Կենտրոնական



դպրոցում մշտական վերակացուի պաշտօնը՝ պ. Մ. Կարապետեան, և Օր. Ս. Կատարինեան դպրոցում՝ մշտական վերակացուի պաշտօնը կատարել է մինչև Նոյեմբեր ամսի վերջ օր. Հ. Սիմէօնեան, իսկ դրանից յետոյ շաբաթէ-շաբաթ հերթական վերակացութիւն են արել պ. պ. Յ. Աբգարեան ու Ղ. Մարտիրոսեան, և վարժուհիներ՝ Ե. Իսրայէլեան, Ս. Դաւթեան, Լ. Տէր Կիւրեղեան, Ա. Տէր Նիկողայոսեան, Հ. Առաքելեան, Լ. Խաչիկեան և Ի. Խաչիկեան։ Երեք դպրոցներում էլ հսկողութիւնը տարուել է գոհացուցիչ չափով։

## ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Իւրաքանչիւր դասարան ունեցել է իւր դաստիարակը, որի անմիջական պարտականութիւնն է եղել հսկել նոյն դասարանի երեխաների վարքի ու կրթական վիճակի վրայ, ու կատարել դասարանի ցուցակագրութեան և այլ ընթացիկ աշխատանքները։

Դաստիարակի պաշտօն վարել են.—

### Գ.-Բանանեան Մանկապարտէզ

| | | | |
|---|---|---|---|
| Ա. | բաժ. | օր. | Հ. Հայրապետեան |
| Բ | » | օր. | Ե. Կիրակոսեան |
| Գ | » | օր. | Մ. Սիմէօնեան |

### Գ.-Բանանեան դպրոց

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ա. | բաժ. | հ. | օր. | Մ. Վարդանեան |
| Ա. | » | գ. | օր. | Հ. Սիմէօնեան |
| Բ | » | հ. | պ. | Եղ. Դաւթեան |
| Բ | » | գ. | օր. | Ի. Խաչիկեան |
| Բ | » | պ. | » | Լ. Խաչիկեան |
| Գ | » | հ. | » | Ս. Դաւթեան |
| Գ | » | գ. | Տէր | Համբարձում քհնյ. Վարդանեան |
| Գ | » | պ. | օր. | Լ. Տէր Կիւրեղեան |
| Ա. | դաս. | հ. | պ. | Ղ. Մարտիրոսեան |
| Ա. | » | գ. | պ. | Պ. Տուքուրեան |
| Ա. | » | պ. | օր. | Հ. Առաքելեան |
| Բ | դասարան | | պ. | Տ. Աբգարեան |

Ս. Կատարինեան դպրոց

Բ դասարան պ. Յ. Աբգարեան
Գ » օր. Ե. Խսրայէլեան
Դ » » Ա. Տէր Նիկողայոսեան
Ե » Տէր Եսայի քհնյ. Յովհաննիսեան
Զ « Տէր Վարդան քհնյ. Վարդանեան

Կենտրոնական դպրոց

Գ դասարան պ. Ա. Յարութիւնեան
Դ » պ. Եփ. Դուլթեան
Ե » պ. Ստ. Աբգարեան
Զ » պ. Մ. Կարապետեան

## ՈՒՍՈՒՑԻՉ-ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹԻՒՆ և ԱՒԵԼՈՐԴ ՊԱՐԱՊԱԾ ԴԱՍԵՐ.

Հիւանդութեան, ծիսական գործերի և այլ յորգելի պատճառներով՝ տարուայ ընթացքում բացակայել են դասերից հետևեալ ուսուցիչները, որոնց աւելորդ պարապած դասերը ևս նշանակում ենք այստեղ։

| անուն—ազգանուն | բացակայած դաս. թիւը. | քանի անգամ է ուշացել | աւելորդ պարապած դասերի թիւը. |
|---|---|---|---|
| Յովսէփ Աբգարեան | 1 | — | 5 |
| Ստեփան Աբգարեան | 9 | — | — |
| Տիգրան Աբգարեան | 7 | — | — |
| Աշխէն Դուլթեան | 18 | 12 | — |
| Եղիա Դուլթեան | 9 | — | 3 |
| Եփրեմ Դուլթեան | 4 | 9 | — |
| Արմենակ Յարութիւնեան | 4 | 1 | — |
| Հայկանոյշ Առաքելեան | 9 | — | 5 |
| Եղիսաբէթ Իսրայէլեան | 10 | — | 11 |
| Աստղիկ Տէր Նիկողայոսեան | 18 | — | 8 |
| Եղիսաբեթ Կիրակոսեան | 7 | — | — |
| Հեղինէ Հայրապետեան | 20 | — | — |
| Լուսաբեր Խաչիկեան | — | 3 | 4 |



| անուն—ազգանուն | բացակայած դաս. թիւը | քանի անգամ է ուշացել | աւելորդ պարապած դասերի թիւը. |
|---|---|---|---|
| Իշխանուհի Խաչիկեան | 8 | 3 | — |
| Լուսաբեր Տէր Կիւրեղեան | 2 | — | 4 |
| Համասփիւռ Սիմէօնեան | — | 8 | 5 |
| Մարիամ Սիմէօնեան | 1 | — | — |
| Մէրխաթուն Վարդանեան | 4 | 3 | 1 |
| Մկրտում Կարապետեան | 15 | — | — |
| Ղազարոս Մարտիրոսեան | — | 1 | 5 |
| Պօղոս Տուքուրեան | — | — | 4 |
| Տէր Եսայի քհնյ. Յովհաննիսեան | 15 | 1 | — |
| Տէր Համբ. քհնյ. Վարդանեան | 30 | — | — |
| Տէր Վարդան քհնյ. Վարդանեան | 26 | — | 11 |
| Միրզա Մահմադ | 50 | — | — |
| Համագումար | 267 | 41 | 66 |

պ. Ա. Աթայեանի բացակայած դասերի թիւը արձանագրուած չէ։

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Սոյն ուսումնական տարուայ ընթացքում ունեցել ենք 20 մանկավարժական ժողով։ Ժողովների զբաղումներն եղել են՝ դասերի բաշխումը, դասարանական դաստիարակների հարցը, հանդէսների կազմակերպութեան կարգադրութիւնները, դպրոցական-աշակերտական կարգապահութեան, քննութիւնների, աշակերտ-աշակերտուհիների յառաջադիմութեան վարք ու բարքի, փոխադրելու և այլ դաստիարակչական ու ընթացիկ հարցեր։

Եղել է նաև մի Հոգաբարձական և Ուսուցչական խառը ժողով կարգադրելու համար թոշակի խնդիրը։

## Թ Ո Շ Ա Կ

Հոգաբարձութեան որոշման համաձայն՝ այս տարի նորից հաստատուեց թոշակի դրութիւնը մեր դպրոցներում։

Թոշակի քանակը՝ (տարեկան 6—50 ղռան), նշանակուած է ծնողների կարողութեան ու միջոցների համեմատ։ Թոշակ վճարողները կազմում են աշակերտութեան գրեթէ $1/4$ մասը։

Ուրախութեամբ ենք արձանագրում, որ ծնողներից շատերը սիրով ու անտրտունջ վճարում են իրանց երեխաների համար նշանակուած թոշակի գումարը. սակայն, ցաւում ենք որ կան և՛ ծնողներ, որոնք տարուայ ընթացքում յումպէտս և անմիտ զուարճութիւնների ճանապարհին չեն զլանում ծախսել տասնեակ թումաններ, բայց երբ հարցը դառնում է դպրոցական թոշակի՝ մի քանի ղռանների շուրջը, նրանք դժկամակում են դրամական մի փոքրիկ զոհողութիւն անել իրանց երեխաների կրթական ու դաստիարակչական սուրբ գործի համար։ Այսպիսի վերաբերմունքն՝ ունեւոր բայց վճար անել չցանկացող ծնողների կողմից, մենք գտնում ենք դատապարտելի, որպէս և երևոյթը շատ տխուր ու ցաւալի։

## ՀԱՆԴԷՍՆԵՐ ՈՒ ԿԱՐԳԵՐ

Այս ուսումնական տարուայ ընթացքում կազմակերպուել ու տեղի են ունեցել հետևեալ հանդէսները. —

1. Տարեմուտի երեկոյին դպրոցական հանդէս ու մանկական ներկայացում։
2. Ծառատնկութեան ու գարնան տօնը՝ Մարտ 4-ին, որ ստիպուած եղանք որոշ հանգամանաց պատճառով, կատարել առանց երաժշտութեան ու սովորական շքեղ թափօրին. սակայն, սաների համար շատ հաճելի անցաւ այդ օրը, մանաւանդ որ այս տարի աւելացրուած էին զանազան խաղեր, որոնց մէջ յաջող մրցողներին տրուեցան պարգևներ՝ ուսուցիչների, հոգաբարձուների և մի քանի բարեկամների կողմից նուիրուած։
3. Ուսուցչական խմբի նախաձեռնութեամբ ու սիրողների բարեհաճ մասնակցութեամբ՝ Ապրիլ 4-ին, Երաժշտա—



Թատերական Երեկոյթ՝ յօգուտ Տաճկահայ դժբաղտացածներին։

4 Ապրիլ 18-ին՝ Գրական-Երաժշտական Երեկոյթ, մեր ազգային դպրոցների Բարերար—Հիմնադիրների յիշատակին նուիրուած։ Այս հանդէսին մեծ չափով մասնակցութիւն ունեցան Մանկապարտէզի սաները։

---

Մեր դպրոցների մեծանուն բարերարների՝ Գէորգ-Քանեանի, Մանուկ Յորդանանեանի և Յարութիւն Աբգարեանի անմահ յիշատակը յարգելու և երախտագիտական պարտք վճարելու համար՝ դպրոցներիս ուսուցչական կազմն և երկսեռ աշակերտութիւնը ներկայ են գտնուել Ս. Պատարագին և երջանկայիշատակ բարերարների համար կատարուած հոգեհանգստեան արարողութիւններին՝ Ս. Գէորգ և Ս. Աստուածածին Եկեղեցիներում ու Ս. Կատարինեան կուսանաց Մենաստանի մատուռում։

2089-2002

## ԳՐԱԴԱՐԱՆ

Ընթերցանութեան գործն երկսեռ դպրոցներում աւելի կանոնաւոր հիմքերի վրայ դնելու նպատակով, Դպրոցներիս Հոգաբարձութեան որոշման համաձայն՝ ընտրուեց մի մասնախումբ, պաշտօն ունենալով աշակերտների ինքնազարգացմանը նպաստող ու յարմար գրքերը զատելու այն գրքերից՝ որոնք բնաւ մատչելի չեն աշակերտական մտքին կամ բոլորովին անյարմար են աշակերտ-աշակերտուհիների ձեռքը յանձնելու։ Բաւական աշխատանք կատարուեց այս առթիւ, և ի վերջոյ Մասնախումբը կազմեց ընթերցանելի գրքերի մի առանձին ցուցակ, որ բովանդակում է մօտ 700 կտոր գիրք։

Ընթերցանելի գրքերը նոր տումարների մէջ այբուբենական ու դասարանական դասաւորութեամբ անցկացնելու ու գրքերի վրայ նոր թուահամարներ դնելու ու կանոնաւորելու դժուարին գործը ստանձնեց ու կատարեց գրադարանապետ՝ օր. Լ. Տէր-Կիւրեղեանը։

Յիշեալ ցուցակը կազմելիս յայտնուեց, որ նախկին գրադարանապետների օրով բաւական գրքեր անհետացել են՝ շնորհիւ այն հանգամանքի, որ ոմանք ընթերցանութեան համար վերցրել են գրքեր, բայց ընթերցումից յետոյ բարեխղճութիւնը չեն ունեցել գրքերը վերադարձնելու գրադարանապետներին։

## ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Աշակերտական ինքնազարգացման լաւ միջոցներից մէկն էլ ընթերցանութիւնն է, որ ղեկավարուել է կանոնաւոր կերպով դաստիարակների հսկողութեան տակ։ 'Ի նկատի ունենալով որ անկանոն ու խառն ի խուռն ընթերցանութիւնը կարող է վնասել աշակերտների մտաւոր զարգացմանը, այս պատճառով էլ աշակերտական հասակի ու զարգացմանը համապատասխան գրքերի ցուցակ է կազմուել իւրաքանչիւր դասարանի համար, և որի համեմատ դաստիարակները վերցրել են գրադարանապետից որոշ քանակութեամբ գրքեր ու բաժանել իրանց սաներին։

Ընթերցանութեամբ պարապել են բոլոր աշակերտները՝ սկսած Գ բաժանմունքից մինչև Զ դասարանը։ Ամբողջ տարուայ ընթացքում կարդացուել է 3006 կտոր գիրք, որ տոկոսի վերածելով՝ իւրաքանչիւր աշակերտին ընկնում է 12 կտոր գիրք։

## ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Սխալ է կարծել թէ երեխաների բարոյական դաստիարակութեան գործը ծանրանում է միայն ուսուցիչ-դաստիարակների վրայ։ Աշակերտների զգացմունքների ազնուացումը, վարք ու բարքի հարցը պէտք է լինի ոչ միայն դպրոցի՝ այլև ընտանիքի ամենագլխաւոր նպատակներից մէկը. Ինչ կարելի է սպասել այն աշակերտից, որ լսում է ընտանեկան շրջանում աննպաստ ակնարկներ՝ զրոյցներ և այլն, ուղղուած դպրոցի և ուսուցիչների հասցէին։ Ի՞նչ բարոյա-



կան ազդեցութիւն կարող է գործել ուսուցիչն իր աշակերտի վրայ, երբ աշակերտի միտքն արդէն ուրիշ մթնոլորտում թունաւորուել է իւր ուսուցչի դէմ։ Մեր խորին համոզումն է, որ ուսուցիչ-դաստիարակների գործը բարոյական դաստիարակութեան գործին մէջ մեծապէս դիւրացրած կըլինեն ծնողներն այն ժամանակ՝ երբ նրանք ևս կենդանի բարի օրինակով բարոյապէս կ'ազդեն իրանց զաւակների վրայ ընտանեկան շրջանում, ու մեծարանքով կ'վերաբերուեն դէպի դպրոցներն ու դաստիարակ-ուսուցիչներն՝ որոնց խնամքին են յանձնուած իրանց զաւակները։ Եթէ ծնողներն ունեն որևէ ասելիք դպրոցների մասին կամ որոշ ուսուցչի դէմ, թող յայտնեն ուր որ անկ է՝ բայց պատշաճ և օրինաւոր ձևով։

## ԵՐԳԵՑԻԿ ԵՒ ՆՈՒԱԳՈՂ ԽՄԲԵՐ

Այս տարի էլ դպրոցներս ունեցել են երգեցիկ և երաժշտական խմբեր։

Երգեցիկ խումբը բաղկացած է եղել մօտ 150 աշակերտ-աշակերտուհիներից, և ղեկավարութեամբ պ. Ա. Աթայեանի երգել է՝ քառաձայն, Կիւրակէ և տօն օրերին Ս. Ամենափրկչեան Վանքի Մայր Եկեղեցում և սրբոց տօներին մի քանի թաղային Եկեղեցիներում։ Երգել է նաև զանազան աշխարհիկ երգեր դպրոցական հանդէսներին

Երաժշտական խումբը՝ բաղկացած 26 հոգուց, նուագել է՝ պ. Մ. Կարապետեանի ղեկավարութեամբ, եւրոպական ու պարսկական զանազան կտորներ դպրոցական հանդէսներին ու ներկայացումներին։

## ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Այս տարի էլ ունեցանք աւարտական առարկաներից դասարանական քննութիւններ, որի նպատակն էր ամփոփել տալ աշակերտների անցած գիտելիքներն ու մի հասկացողութիւն կազմել թէ աշակերտները ի՞նչ չափով են իւրաց-

րել ուարտուող առարկաները։ Սակայն, Զ. դասարանի աւարտական քննութիւններն որոշ առարկաներից կատարուել են՝ գրաւոր, իսկ պատմական առարկաներից՝ բերանացի։ Զ դասարանի քննութիւններին ներկայ է եղել մի քանի անգամ Հոգաբարձութեան նախագահ՝ Բարձրապ. Տէր Եզնիկ վարդապետը, իսկ ամեն օր՝ Հոգաբարձութեան անդամ՝ պ. Ներսէս Դաւթեանը։ Քննութիւնների արդիւնքն եղել է ընդհանրապէս գոհացուցիչ։

Աւարտական առարկաների քննութեանց ցուցակը հետեւեալն է.

| Առարկայ | Դասարան | Դասատու |
|---|---|---|
| Հայրենագիտութիւն | Գ բ. հ. | պ. Եփ. Դաւթեան |
| » | Գ բ. դ. | » » » |
| » | Գ բ. պ. | » » » |
| Իրագիտութիւն | Գ բ. հ. | պ. Ղ. Մարտիրոսեան |
| » | Գ բ. դ. | » » » |
| » | Գ բ. պ. | » » » |
| Բնական. պատմութիւն | Գ դ. աղջ. | պ. Ա. Յարութիւնեան |
| » | Գ դ. տղ. | » » » |
| Աշխարհագրութիւն | Դ դ. աղջ. | պ. Յ. Արգարեան |
| » | Դ դ. տղ. | » » » |
| Հայոց պատմութիւն | Ե դ. աղջ. | Տէր Ե. քհնյ. Յովհաննիս. |
| » » | Ե դ. տղ. | » » » |
| Տնմարակալութիւն | Զ դ. տղ. | պ. Ստ. Արգարեան |
| Թուաբանութիւն և Գործնական Երկրաչափութ. | Զ դ. տղ. | » » » |
| » » | Զ դ. աղջ. | » » » |
| Ալգէբրա | Զ դ. տղ. | » » » |
| » | Զ դ. աղջ. | » » » |
| Երկրաչափութիւն | Զ դ. տղ. | » » » |
| » | Զ դ. աղջ. | » » » |
| Ռուսերէն | Զ դ. տղ. | պ. Եփ. Դաւթեան |
| Ֆիզիկա | Զ դ. տղ. | պ. Ա. Յարութիւնեան |
| » | Զ դ. աղջ. | » » » |
| Ընդհ. Պատմութիւն | Զ դ. տղ. | » » » |
| » » | Զ դ. աղջ. | » » » |
| Եկեղեցական պատմութիւն | Զ դ. տղ. | Տէր Ե. քհնյ. Յովհաննիսեան |
| » » | Զ դ. աղջ. | » » |



| Առարկայ | Դասարան | Դասատու |
|---|---|---|
| Աստնին տնտեսութիւն | Զ դ. աղջ. | օր. Ե. Իսրայէլեան |
| Պարսկերէն | Զ դ. տղ. | Միրզա Մահմադ |
| Անգլերէն | Զ դ. տղ. | պ. Մ Կարապետեան |
| » | Զ դ. աղջ. | Տէր Վ. քհնյ. Վարդանեան |
| Հայոց լեզու և Բանահիւս. տեսութիւն | Զ դ. տղ. | պ. Ս. Աթայեան |
| » | Զ դ. աղջ. | » » » |
| Հայ Գրական պատմութ. | Զ դ. տղ. | » » » |
| » » | Զ դ. աղջ. | » » » |

## ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մանկավարժական Խորհուրդը կատարել է աշակերտ-աշակերտուհիների փոխադրութիւնները՝ նկատի առնելով սաների տարեկան ընդհանուր յառաջադիմութիւնը։

Ընդհանուր վիճակացոյցի մէջ նշանակուած են՝ թէ իւրաքանչիւր դասարանից քանի հոգի են փոխադրւում յաջորդ դասարան, քանի հոգի մնում են նոյն դասարանում և քանի հոգի վերաքննելի են։

Երեք դպրոցների սաներից փոխադրւում են՝ 259 (62 %), մնում են՝ 134 (32 %), իսկ վերաքննելի են՝ 24 (6 %)։

Գ.-Քանանեան Մանկապարտէզի երեք բաժանմունքներից փոխադրւում են՝ 112 (76 %), իսկ մնում են՝ 36 (24 %)։

Երեք դպրոցներում ու Մանկապարտէզում փոխադրուողները միասին կազմում են՝ 66 %-ին, մնացողները՝ 30 %-ին, իսկ վերաքննութեան ենթարկուողները՝ 4 %-ին։

## ԸՆԹԱՑԱՒԱՐՏՆԵՐ

Այս տարի աւարտում են Զ դասարանը 11 հոգի՝ 2 տղայ և 9 աղջիկ։

Պէտք է խոստովանել, որ կատարուած քննութիւնները՝ բոլոր առարկաներից, եղել են բազմակողմանի և խիստ անաչառ, իսկ ստացած արդիւնքն էլ եղել է շատ լաւ։ Այս պարագայն գալիս է իբրև փայլուն փաստ ապացուցելու, որ

թէ ուսուցիչները և թէ սաները կատարել են իրանց գործն ու աշխատանքն ամեն բարեխղճութեամբ. ուստի, ուրախութեամբ ու գոհ սրտով տալիս ենք՝ համաձայն Մանկավարժական Խորհուրդի որոշմանը, առաջին կարգի վկայական՝ աւարտող աշակերտ-աշակերտուհիներին:

Կենտրոնական դպրոցի Զ դասարանի աւարտող աշակերտներն են.

1 Մինասեան Կարապետ. 2 Կարապետեան Սուքիաս:

Ս. Կատարինեան Օրիորդաց դպրոցի Զ դասարանի աւարտող աշակերտուհիներն են.

1 Աբրահամեան Ծաղիկ
2 Ալլահվէրդեան Մարգարիտ
3 Անտոնեան Էլիզա
4 Աստուածատրեան Ծաղիկ
5 Գրիգորեան Ծաղիկ
6 Ղազարեան Մէրջան
7 Յովսէփեան Երանուհի
8 Շուքուրեան Զախաթուն
9 Տէր Մարտիրոսեան Վիկտորիա

---

Վերջացնելով խօսքս, պարտք եմ համարում յայտնել անկեղծ շնորհակալութիւնս երկսեռ դպրոցաց Պատ. Հոգաբարձութեան Նախագահ՝ Տէր Եզնիկ Վարդապետ Երկարակեցեանին ու Հոգաբարձութեան միւս Մեծարգոյ Անդամներին՝ իրանց ուշադիր հոգացողութեան և Ուսուցչական կազմին ցոյց տուած պատրաստակամ աջակցութեան համար:

Խորին շնորհակալութիւն եմ յայտնում Նոր-Ջուղայի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան և Աղքատախնամ Արկեղ Պատ. Վարչութիւններին, որ այս տարի էլ բարեացակամութիւնն ունեցան մատակարարելու դպրոցների չքաւոր սաներին ուսումնական պիտոյք ու համազգեստ:

Շնորհակալութիւն նաև իմ պաշտօնակից Ուսուցիչ-Ուսուցչուհիներին, որ չ'թերացան իրանց խնամոց յանձնուած



մատաղ սերնդի կրթութեան ու դաստիարակութեան սրբազան գործին մէջ, և յարգելի ծնողների տածած ջերմ յոյսերն արդարացրին իրանց կատարեալ համերաշխ ու բարեխիղճ գործունէութեամբ:

Աւելորդ չեմ համարում արձանագրել այստեղ և՛ այն, որ ուսումնական տարին հազիւ սկսած՝ հէնց առաջին քայլափոխում, մենք բաղխեցանք զանազան դժուարութեանց և անախորժութեանց՝ շնորհիւ մի քանի անձանց, որոնք աշխատեցան երկսեռ աշակերտութեան մտքերը գայթակղեցնել, անմեղ աշակերտներին զոհ դարձնել իրանց ինտրիգներին և ըմբոստութեան ոգի մտցնել նմանց աշակերտների մէջ՝ խանգարելու համար մեր ազգային երկսեռ դպրոցների ներքին խաղաղութիւնը: Սակայն, ուրախ եմ յայտնելս, որ հասկացող ծնողներ ու դպրոցների նուիրական շահերն իրանց սրտին մօտ ճանաչող բարեմիտ անձինք անմիջապէս իմթիկունս հասան մեզ, որոնց անկեղծ աջակցութեամբը յաջողուեց մեզ խեղդել և եթ առաջն առնելու նախապէս ծրագրուած և «թռուցիկի» միջոցով սպառնացած դատապարտելի անկարգութիւնների:

Ուստի, բարոյական պարտք եմ համարում հրապարակաւ յայտնելու իմ ու յարգելի պաշտօնակիցներիս անկեղծ ու ջերմ շնորհակալութիւնները դպրոցներիս անկեղծ բարեկամներին ու յարգելի ծնողներին, որոնք փութացին գործակից գտնուել մեզ հետ ու չ'զլացան տալ Ուսումնական Վարչութեանն իրանց բարոյական ու գնահատելի աջակցութիւնն՝ պահպանելու մեր ազգային դպրոցների ներքին խաղաղութիւնը, ու կատարեալ յաջողութեամբ և անարգել յառաջ վարելու կրթական գործը սոյն ուսումնական տարուայ ընթացքում՝ յօգուտ մեր մատաղ սերնդի:

Փոխ-Տեսուչ Ն.-Ջուղայի } ՎԱՐԴԱՆ ՔՀՆՅ. Ս. ՎԱՐԴԱՆԵԱՆ
Ազգ. երկս. դպրոցների }

23 Յունիսի 1915 թիւ:

# ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

## ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ, ԳԷՈՐԳ-ՔԱՆԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԿԱՏԱՐԻՆԵԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏ-ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ 1914—1915 ՈՒՍՈՒՄՆ. Տ.

| | Դասընթացական բաժանմունքներ եւ Դասարաններ. | Աշակերտներ | Աշակերտուհիներ | Համագումար | Փոխադրուեցին յաջորդ դասարան | Մնացին նոյն դասարանում | Հեռացուեցին | Հօր զբաղմունքը եւ — Հոգեւորական | Ուսուցիչ | Մանրավաճառ | Արհեստաւոր | Վաճառական | Գործակատար | Երկրագործ | Մշակ | Ծառայ | Գինեվաճառ | Անգործ | Կարողութիւնը — Հարուստ | Միջակ | Չքաւոր | Ստանում են դասական պիտոյք. — Նոր-Ջուղայի Ազգային Արկղից | Նոր-Ջուղայի Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնից | Որ՞ տեղացի — Նոր-Ջուղայեցի | Օտար վայրերից | Թոշակաւոր | Ձրիավարժ | Քանի՞ կտոր գիրք են կարդացել այդ ուսումնական տարում | Ուսումնական տարում քանի՞ օր են բացակայել |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Գէորգ-Քանանեան Վարժարան | Ա. բաժանմ. (Հիմնական) | 20 | 18 | 38 | 28 | 10 | | 3 | | 4 | 7 | 2 | 4 | 2 | 1 | 9 | | 4 | 1 | 17 | 20 | 9 | 10 | 28 | 10 | 7 | 31 | | 3108 |
| | Ա. բաժանմ, (զուգընթաց) | 20 | 17 | 37 | 27 | 10 | | 1 | | 3 | 9 | 2 | 5 | 2 | 3 | 6 | 2 | 4 | 3 | 13 | 21 | 10 | 9 | 32 | 5 | 14 | 23 | | 837 |
| | Բ. բաժանմ. (Հիմնական) | | 20 | 20 | 11 | 9 | | | 1 | | 6 | | 3 | | | 2 | 1 | 2 | 2 | 4 | 14 | | 13 | 17 | 3 | 5 | 15 | | 1878 |
| | Բ. բաժանմ. (զուգընթաց) | 26 | | 26 | 19 | 7 | | 1 | | | 8 | 2 | 1 | | 1 | 6 | 2 | | | 8 | 18 | 14 | | 20 | 6 | 8 | 18 | | 1921 |
| | Բ. բաժանմ. (պատրաստակ՛) | 14 | 14 | 28 | 18 | 10 | | 3 | 3 | | 5 | 1 | 3 | 2 | | 5 | 2 | 3 | 3 | 16 | 9 | 4 | 7 | 22 | 6 | 8 | 20 | | 1614 |
| | Գ. բաժանմ. (Հիմնական) | | 29 | 29 | 14 | 15 | | 3 | | | 8 | | 5 | | 1 | 4 | | 2 | 5 | 13 | 11 | | 11 | 28 | 1 | 10 | 19 | 627 | 1727 |
| | Գ. բաժանմ. (զուգընթաց) | 28 | | 28 | 17 | 11 | | 1 | | 6 | 8 | 1 | | 1 | 3 | 5 | | 3 | 1 | 11 | 16 | 13 | | 17 | 11 | 8 | 20 | 81 | 2192 |
| | Գ. բաժանմ. (պատրաստակն) | 15 | 19 | 34 | 20 | 14 | | 1 | 1 | 2 | 8 | 3 | 1 | 1 | | 6 | | 1 | 3 | 9 | 22 | 8 | 13 | 29 | 5 | 8 | 26 | 165 | 2274 |
| | Ա. դասարան (Հիմնական) | 29 | | 29 | 10 | 15 | 4 | 2 | | | 1 | 1 | 3 | 2 | 1 | 5 | 1 | 4 | 4 | 10 | 15 | 13 | | 20 | 9 | 6 | 23 | | 2020 |
| | Ա. դասարան (զուգընթաց) | | 20 | 20 | 11 | 8 | 1 | 1 | 1 | 3 | 3 | | 4 | | | | 2 | | | 12 | 8 | | 8 | 16 | 4 | 10 | 10 | 319 | 1059 |
| | Ա. դասարան (պատրաստակն) | 7 | 16 | 23 | 6 | 12 | 5 | | | 1 | 10 | | | 1 | 3 | 3 | | 2 | 2 | 8 | 13 | 3 | 9 | 18 | 5 | 6 | 17 | 240 | 2313 |
| Կեդր. Վարժարան | Բ. դասարան | 22 | | 22 | 13 | 3 | 6 | 2 | 2 | 1 | 7 | | 2 | 2 | | 4 | | 2 | | 12 | 10 | 11 | | 20 | 2 | 9 | 13 | 157 | 1332 |
| | Գ. դասարան | 13 | | 13 | 10 | 2 | 1 | | | 1 | 4 | 1 | 1 | 3 | 1 | 1 | | 1 | | 6 | 7 | 6 | | 9 | 4 | 5 | 8 | 350 | 424 |
| | Դ. դասարան | 12 | | 12 | 10 | 2 | | 1 | | | 6 | | 2 | 1 | | | | 2 | 2 | 9 | 1 | 6 | | 10 | 2 | 4 | 8 | 97 | 529 |
| | Ե. դասարան | 9 | | 9 | 3 | 1 | 5 | 1 | | | 2 | | | 1 | 1 | | 1 | 1 | – | 4 | 5 | 5 | | 7 | 2 | 1 | 8 | 210 | 181 |
| | Զ. դասարան | 2 | | 2 | | | | | | | | | | 2 | | | | | | 1 | 1 | 2 | | | 2 | | 2 | 125 | 48 |
| Ս. Կատարինեան Օրիորդաց Վարժարան | Բ. դասարան | | 16 | 16 | 13 | 3 | | 1 | 1 | 2 | | | 2 | | 1 | 2 | 1 | 1 | 1 | 3 | 12 | | 9 | 15 | 1 | 4 | 12 | 70 | 687 |
| | Գ. դասարան | | 15 | 15 | 14 | 1 | | | | 3 | 5 | | 1 | | | 4 | 1 | | 1 | 8 | 6 | | 5 | 14 | 1 | 4 | 11 | 197 | 1268 |
| | Դ. դասարան | | 12 | 12 | 11 | | 1 | 1 | | 1 | 4 | | 1 | | | | 1 | | 2 | 5 | 5 | | 5 | 12 | | 2 | 10 | 133 | 783 |
| | Ե. դասարան | | 6 | 6 | 4 | 1 | 1 | 1 | 1 | | 1 | | | | | 2 | | 1 | | 3 | 3 | | 2 | 6 | | 3 | 3 | 63 | 797 |
| | Զ. դասարան | | 9 | 9 | | | | | 1 | | 1 | 1 | | | | 1 | | 2 | 2 | 3 | 4 | | 4 | 9 | | 3 | 6 | 172 | 1159 |
| Ք. Քանանեան Մանկավարժական | Ա. տարի | 36 | 35 | 71 | 36 | 35 | | 4 | | 2 | 23 | 2 | 13 | | 4 | 14 | 4 | 3 | 2 | 34 | 35 | 36 | | 55 | 16 | 13 | 58 | | 938 |
| | Բ. տարի | 22 | 16 | 38 | 37 | 1 | | 2 | | 2 | 6 | 2 | 11 | 1 | 3 | 6 | | 3 | 1 | 21 | 16 | 28 | | 35 | 3 | 11 | 27 | | 843 |
| | Գ. տարի | 18 | 21 | 39 | 39 | | | 1 | 3 | | 9 | 4 | 6 | | 4 | 5 | 2 | 4 | 3 | 20 | 16 | 39 | | 31 | 8 | 12 | 27 | | 860 |
| | Ընդհանուր գումար | 293 | 283 | 576 | 371 | 170 | 24 | 30 | 14 | 31 | 141 | 22 | 68 | 21 | 27 | 90 | 20 | 45 | 38 | 250 | 288 | 207 | 105 | 470 | 106 | 161 | 415 | 3006 | 30792 |

ՆՈՐ—ՋՈՒՂԱՅԻ

# ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ, ԳԷՈՐԳ-ՔԱՆԱՆԵԱՆ, Ս. ԿԱՏԱՐԻՆԵԱՆ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ

եւ

# ԳԷՈՐԳ-ՔԱՆԱՆԵԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ

սաների

# Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր   Վ Ի Ճ Ա Կ Ա Ց Ո Յ Ց Ը

1914—1915 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ, ԳԷՈՐԳ ՔԱՆԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԿԱՏԱՐԻՆԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ,

1914—1915 ՈՒՍՈՒՄՆ. Տ.

Հոգաբարձութիւնս սոյն 1914—1915 ուսումնական տարեշրջանում ամեն շաբաթ ունեցել է իր հերթական ժողովները, ընդ ամենը 62 նիստ, նուիրուած ուսուցչական կազմի լրացման, դպրոցների բիւտճէի, դրամական նորանոր աղբիւրներ գտնելու, արհեստանոցների կանոնաւորման, կալուածքների կառավարութեան, աշակերտական գրադարանի բարւոքման և այլ խնդիրների։

### ԲԻՒՏՃԷ

Դպրոցներս սոյն տարեշրջանում ունեցել են ընդ ամենը 149,036 ղ. 90 ս. մուտք և 148,550 ղ. 30 ս. ելք։ Չնայած որ ուսուցիչ-վարժուհիների ռոճիկների վրայ յաւելումներ են եղել և հացահատիկների արժանութեան պատճառով՝ դպրոցներիս կալուածքներից ստացուած ցորենն ու գարին վաճառուել են աւելի պակաս գնով, քան անցած տարիները, բայց և այնպէս Հոգաբարձութիւնս հնարաւորութիւն է ունեցել ոչ միայն ուսուցիչ-վարժուհիների ռոճիկները կանոնաւոր վճարել, այլ և հատուցանել նախորդ տարուանից մնացած 2,000 թուման պարտքը։

### ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՕՆԴ

Տարուայ սկզբից Հոգաբարձութիւնս անընդհատ բանակցութեան մէջ է եղել մեր հնդկահայ հայրենակիցների հետ,

խնդրելով որ բարեհաճին Կալկաթայի Ճեմարանի անունով հանգանակած գումարը (որ ցարդ նպատակին չի ծառայել) եթէ ոչ ամբողջապէս, գոնէ կէս մասը յատկացնել մեր Ազգ. երկսեռ դպրոցներին։ Ուրախ ենք յայտնելու, որ վերջին գրութիւններից այն յոյսն է տածւում, որ յիշեալ գումարի հանգանակութեան մեծաքանակ մասնակցողներից ոմանք մտադիր են մի որոշ գումար յատկացնելու։

## ԴՊՐՈՑԱԿԱՆ ԹՈՇԱԿ

Հոգաբարձութիւնս անցեալ տարուայ որոշման համաձայն՝ մտցրեց այս տարի թոշակի սիստեմը, որ մի տարի ընդհատուել էր։ Թէպէտ ինչպէս միշտ, այս անգամ էլ գտնուեցին անպարտաճանաչ ծնողներ, որոնք գլացան վճարել իրենց երեխաների համար նշանակուած չնչին թոշակը։ Սակայն ուրախութեամբ պիտի արձանագրել, որ համարեա բոլոր քիչ թէ շատ ունեւոր ծնողները ընդ առաջ գնալով Հոգաբարձութեանս կարգադրութեանը, սիրայօժար կերպով վճարեցին այդ դպրոցական տուրքը։

Թոշակներից ստացուեց ընդամենը՝ 2,446.— ղռան։

## ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԱՐԽԻՒ

Ի նկատի առնելով այն հանգամանքը, որ Ազգ. երկսեռ դպրոցների Հոգաբարձութիւնը ցարդ մի առանձին ժողովատեղի չունենալու պատճառով զուրկ էր եղել և մի սեպհական արխիւ ունենալուց՝ Հոգաբարձական գործերը կանոնաւորութեամբ պահելու համար, բարուոք համարուեց Ս. Ամենափրկչեան վանքի սենեակներից մէկը պատրաստել և կահաւորել որպէս Հոգաբարձութեանս ժողովատեղի և արխիւ։ Իսկ գրաւոր աշխատանքներն էլ կանոնաւոր կերպով վարելու համար վարձեց մի քարտուղար։



## ՋՈՒԼՀԱԿԱՆՈՑ

Հոգաբարձութիւնս տեսնելով որ դպրոցի Ջուլհականոցը հակառակ գործ դրուած ամեն միջոցների, աշակերտներ չի ունենում և այդ հնացած արհեստով հետաքրքրուողներ չեն գտնւում, որոշեց դիմել Կալկաթա, նոյն Արհեստանոցի հիմնադիր Մեծարգոյ պարոնայք Աբգար և Ընկերութեան, խնդրելով որ բարեհաճին կամ նիւթականապէս օգնել, որ հմուտ վարպետներ վարձուին և զանազան ընտիր տեսակի կտորներ գործուին՝ արհեստանոցը հետաքրքիր դարձնելու, և կամ արտօնութիւն շնորհել արհեստը փոխելու և գորգագործութիւն մտցնելու, որ ամեն մասամբ աւելի օգտակար է, քան ջուլհակութիւնը։ Ցարդ պատասխան չի ստացուած։

## Հ. ԳԷՈՐԳ Ծ. Վ. ԹՈՒՐԵԱՆԻ ՀԱՐՑԸ

1912 թուից 'ի վեր Հ. Թուրեան վարդապետին տեղս հրաւիրելու առթիւ եղած բանակցութիւններն ու դիմումները հասան այն վերջաւորութեան, որ Վեհ. Կաթողիկոսի հրամանով և Կ. Պոլսի Ամենապատիւ Պատրիարքի թոյլտուութեամբ առաջնորդական փոխանորդ նշանակուեց Պարսկա-Հնդկաստանի թեմի համար և այդ մասին Առաջնորդ. Խորհրդարանի միջոցով պաշտօնապէս յայտնուեց Հոգաբարձութեանս Վեհ. Հայրապետի Դիւանից։ Հ. Թուրեանն էլ առանձին գրութեամբ յայտնեց Հոգաբարձութեանս, որ համաձայնել և պատրաստւում էր գալու տեղս, երբ Տաճկաց կառավարութիւնն էլ միացաւ համաշխարհային պատերազմին և Հ. Թուրեանն անկարող եղաւ թողնել Տրապիզոնը և գալ տեղս որպէս Առաջնորդ. փոխանորդ և միևնոյն ժամանակ որպէս վերատեսուչ մեր Ազգ. երկսեռ դպրոցների։

## ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Հոգաբարձութիւնս իր զբաղմունքի առարկան դարձրեց

նաեւ դպրոցների Աշակերտական գրադարանի կանոնաւորու-թիւնը եւ հոգաբարձական եւ ուսուցչական կազմից խառն մի յանձնաժողով ընտրեց գրադարանում եղած գրքերը նորից ըստ դասարանների բաժանելու, անյարմարները ջոկելու եւ պակասը լրացնելու։

## ՆՈՒԷՐՆԵՐ

Ինչպէս յայտնի է, այս տարի հայահատիկների արժա-նացումից Ազգ. երկսեռ դպրոցները իրենց ունեցած ցորե-նից եւ գարուց բաւականաչափ օգուտ չունեցան՝ նախկին տարիների հետ համեմատած։ Այդ բացը մասամբ ծածկուեց հետեւեալ արտակարգ նպաստներով։

| | | |
|---|---|---|
| Նուէր Անգլ. հիւպատոսից | 500 | ռուբ. |
| պ. Մարտիրոս Ա. Եսայեանից ի հա-շիւ երեխաների թոշակներին | 500 | » |
| Նուէր Ռուսաց Բանկից ի յիշատակ հանգ. Ալ. Ֆօն-Կավէրի | 2500 | » |
| Ընդամենը՝ | 3500 | ռուբ. |

## ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆՊԱՍՏԸ

Հոգաբարձութիւնս ի նկատի առնելով այն հանգամանքը, որ տեղիս Ս. Եկեղեցեաց վարչութիւններից ոմանք հա-կառակ քանիցս արած խոստումներին, կանոնաւոր կերպով չէին վճարում նշանակուած նպաստները, խնդրեց Առաջնորդ. Խորհրդարանից հարկաւորն կարգադրել այդ մասին։

Յունիսի 7-ին Առաջնորդ. Խորհրդարանի հրաւէրով Ազգ. Առաջնորդարանում տեղիս բոլոր եկեղեցեաց երէցփոխների ու հաշուետեսների հետ միասին խառն ժողով ունեցանք, ուր կարծիքների փոխանակութիւնից յետոյ, ի նկատի առ-նելով այս տարուայ բացառիկ ծախքերը, որոշուեց



վճարել դպրոցներին հետեւեալ չափով, ցնոր տնօրէնութիւն։

| | | | |
|---|---|---|---|
| Ս. Սարգիս | եկեղեցի | 100 | ռուբ. |
| Ս. Մինաս | » | 750 | » |
| Ս. Ներսէս | » | 200 | » |
| Ս. Նիկողայոս | » | 50 | » |
| Ս. Յովհաննու | » | 400 | » |
| Ս. Գր. Լուսա. | » | 200 | » |
| Ս. Գէորգ | » | 300 | » |
| Ս. Ածածին. | » | 300 | » |
| Ս. Ստեփաննոս *) | » | | |

Ի նկատի առնելով որ Ս. Ամենափրկչ. Հոգեւոր դպրա-նոցն իր նպատակին չի ծառայում, Հոգաբարձութիւնս անդրբարեւոք համարեց դիմել Առաջնորդ. Խորհրդարանին եւ խնդ-րել, որ բարեհաճէ յիշեալ դպրանոցի գումարն, կամ եկամտի կէսը յատկացնել Ազգ. երկսեռ դպրոցներին։ Ուրախ ենք յայտնելու, որ Առաջնորդ. Խորհրդարանի Պատկառելի Ա-տեանը իր 14 Մայիսի թիւ գրութեամբ խոստացել է ժա-մանակաւորապէս, այն է՝ մինչեւ Հոգեւոր Դպրանոցը զուտ չափահաս քահանայացուների վարժարան դարձնելը, տարե-կան մի հարիւր եւ յիսուն թուման (1500 ռուբ.) նպաստ յատկացնել մեր Ազգ. երկսեռ դպրոցներին։

## ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄ

Ազգ. երկսեռ դպրոցների 1914—1915 ուսումն. տար-ուայ կազմը բաղկացած է եղել 26 հոգուց — 14 ուսուցիչներից եւ 12 վարժուհիներից։ Հակառակ իր ցանկութեան, Հոգա-բարձութիւնս հնարաւորութիւն չէ ունեցել աչքի ընկնող բարեփոխութիւններ կատարելու դպրոցական կեանքում

*) Ծանօթ.— Որովհետեւ Ս. Ստեփաննոս եկեղեցին Բաթումում ունեցած իր շահարաժնից $^{2}/_{3}$-ը արդէն վճարում է Ազգ. Կեդր. դպրոցին, ուստի չը մասնակցից եկեղեցիների նպաստատուութեան։

շնորհիւ հետևեալ հանգամանքների.

1) Հոգաբարձութիւնս ընտրուել և գործի է հրաւիրուել անցեալ տարուայ Սեպտեմբերից, այսինքն նա պաշտօնավարել է ընդ ամենը ինն ամիս. այդ կարճ ժամանակամիջոցում հասկանալի է որ անհնարին էր զգալի բարեկարգութիւններ մտցնել դպրոցներում:

2) Երբ Հոգաբարձութիւնս պաշտօնի հրաւիրուեց, դպրոցական տարին արդէն սկսուած էր, հետևապէս Ուսուցչական կազմի մէջ փոփոխութիւններ մտցնելու կարելիութիւն չկար: Բարձր դասարանների Հայոց լեզուի և գրականութեան բաց մնացած դասերի համար հրաւիրուած (Գէորգեան Ճեմարանն աւարտած) ուսուցիչները չեկան, որպիսի պակասը լրացնելու համար Հոգաբարձութիւնս առաջարկեց իր անդամներից պ. Ա. Սթայեանին յանձն առնել Ե. և Զ. դասարաններում աւանդելու Հայոց գրականութեան պատմութիւն և բանահիւսութեան տեսութիւն, որպէս նաև քառաձայն երգեցողութիւն, որը համաձայնեց միայն այս ուսումն. տարում պարապել:

Ուրիշ արգելառիթ պատճառների մասին Հոգաբարձութիւնս զանց է առնում որ և է բան ասել՝ թողնելով մըտածելու և դատելու հասարակութեանը, որը լաւ իրազեկ է մեր դպրոցների վերջին տարիների վիճակին:

Հոգաբարձութիւնս եկող ուսումն. տարուայ համար խոստումներ անելու հնարաւորութիւնից զուրկ է, որովհետև նախ՝ այս տարի լրանում է իր պաշտօնավարութեան ժամանակաշրջանը (ընտրուած է եղել մի տարով իբրև լըրացուցիչ կազմ) և երկրորդ՝ թէև ըստ սովորութեան եկող տարուայ ուսուցչական խումբը՝ ինքն պէտք է կազմէ, բայց հանգամանքներն ի նկատի ունենալով Հոգաբարձութիւնս չէ կարող հաստատ ասել թէ այդ կողմից յաջողութիւն կունենայ: Հոգաբարձութիւնս դեռ Փետրուարին է դիմել Թիֆլիս՝ հարկաւոր տեղեր և խնդրել գտնելու մեր դպրոցների համար ուսուցիչ և տեսչացու. այդ մասին յայտարար-



ուել է նաև թերթերում, բայց մինչև այժմ պատասխան է ստացուել, որ միայն մէկն է վարձուել:

Եթէ Կովկասից սպասուող ուսուցիչները չեկան, ուսուցչական ներկայ կազմին կաւելանան միայն տեղական ուժերից (Հնդկաստանում կրթուած) մի երկու հոգի:

Դպրոցների կրթականը միջնակարգ դպրոցներին վայել բարձրութեան հասցնելու համար՝ անհրաժեշտ է քառապատիկ աւելի մեծ բիւջէ, քան ունին մեր դպրոցները. քանի որ նրանք զուրկ են այդպիսի միջոցներից, անկարելի է ցանկալի աստիճանի հասցնել մեր դպրոցների կրթական մակերևոյթը:

---

Հոգաբարձութիւնս անկեղծ շնորհակալութիւն է յայտնում դպրոցներիս բոլոր բարերարներին և նուիրատուներին, որոնք իրենց սրտին մօտ զգալով մատաղ սերնդի կրթութեան և դաստիարակութեան սրբազան գործը, չեն խնայել նիւթական և բարոյական ամեն կարգի օժանդակութիւն և զոհողութիւն:

Նոր—Ջուղա,
30 Յուլիս 1915 թ.

# ՀԱՇԻՒ

**ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ**

## ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ,
## Գ. ՔԱՆԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԿԱՏԱՐԻՆԵԱՆ
## ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ
## ԵՒ
## ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՃԻՒՂԵՐԻ

**1914–1915 ՈՒՍՈՒՄՆ. ՏԱՐՈՒԱՅ։**

*ՏՊԱՐԱՆ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆԱՑ*

1 9 1 4

*ՋՈՒՂԱ—ՍՊԱՀԱՆ*

## Հաշուեկշիռ Ել-և-մտից Ազգ. Կեդր. Տղայոց, Գէորգ-Քանանեան վասն 1914–15 ուսումն. տարւոյ, ի միոյ

### ՄՈՒՏՔ

| | Ղռան | Սենք | Ղռան | Սենք |
|---|---|---|---|---|
| Առ մին Օգոստոսի 1914 թ. պատրաստ | | | 690 | 60 |
| **Բաթումիոյ Ազգ. Հաստատութեանց Վարչութիւն.** | | | | |
| Ստացուած Բաթումիոյ Հայ. Ազգ. Հաստատութեանց Պատ. Ատենից | | | | |
| ա. ի հաշիւ Ազգ. Կեդր. դպրոցի գիւղր 2,233-34 | | | | |
| բ. » Ս Կատ. օր. » » 608- | | | | |
| գ. Նուէր Մ. և Յ. Ուսումնարանից » 1,500- | | | | |
| Գումար 4,341-34 | | | 19,781 | 55 |
| **Ստացուած նպաստներ** | | | | |
| Մեծ. պ. պ. Սէթ. Պօղոս և Ընկերութեան միամեայ 1915 թուի 200 Անգլ. ոսկւոյ նպաստը | 12,375 | | | |
| Բաթումիոյ Մեծ. պ. Գէորգ Տէր Ղ. Աբգարեանից իր տան և այգու վարձերը՝ իբրև նպաստ դպրոցներիս չքաւոր աշակերտաց օգտին . | 600 | | | |
| Վեհափառ Շահի տարեկան 100 թումանի նպաստը, որի քառորդն է միայն վճարուել . | 250 | | | |
| պ. Կարապետ Մկրտչեանից . . | 600 | | | |
| Ս. Ամենափրկիչ Հոգևոր դպր. 1915 թ. նպաստը | 1 500 | | | |
| Ս. Գրիգոր Լուս. և Ս. Գէորգ Եկեղ. » » | 500 | | | |
| Ս. Յովհաննու Եկեղեցւոյ » » | 400 | | | |
| Ս. Ներսէս » » » | 200 | | | |
| Ս. Սարգիս » » » | 100 | | | |
| Ս. Նիկողայոս » » » | 50 | | | |
| Սպահանի Ռուսաց Զեղջատու Բանկից, ի յիշատակ հանգ. Ֆօն-Կամէրի . . . . | 2,500 | | | |
| Սպահանի Անգլ. հիւպատոս պ. Գրահամից . | 500 | | 19,575 | |
| **Ներկայացման եւ Տօնածառի հաշիւ** | | | | |
| Ստացուած մանկական երեկոյթից և ներկայացումներից . . . . . | | | 930 | 60 |
| **Հանգ. Ա. Կրէտեանի կտակած գումարի հաշիւ** | | | | |
| Ստացուած հանգ. Աւետիք Կրէտեանի կտակած գիւղր 6507—70-ի չորս տարուայ տոկոս, որ է 129 պաունդ, 4 շիլինգ, 9 պէնս . . | | | 7,988 | 30 |
| **Թոշակադրամ** | | | | |
| Ստացուած թոշակադրամ դպրոցներիս կարողաւոր աշակերտ—աշակերտուհիներից . . | | | 2,446 | |
| **Գանձանակադրամ** | | | | |
| Ստացուած Նոր—Ջուղայի Եկեղեցեաց գանձանակադրամներից . . . . . | | | 60 | 35 |
| **Գէորգ-Քանանեան դպրոցի հաշիւ** | | | | |
| Ստացուած տեղւոյս Կայսերական Բանկից 25 հազար թումանի տոկոսը 6 Յունուարից 1914, ց'6 Յունուար 1915 . . . . | | | 7,500 | |
| Փոխադրելի | | | 58,972 | 40 |



## և Ս. Կատարինեան Օրիորդաց Ուսումնարանաց Նոր-Ջուղայի, Օգոստոսի 1914—ց'31 Յուլիսի 1915 ամի:

### ԵԼՔ

| | Ղռան | Սենք | Ղռան | Սենք |
|---|---|---|---|---|
| **Ռոճիկների հաշիւ** | | | | |
| Վճարուած ուսումնական տարւոյս ընթացքում ռոճիկներ ուսուցիչներին և վարժուհիներին . | | | 49,650 | |
| **Ծառայից ռոճիկի հաշիւ** | | | | |
| Դպրոցներիս ծառաների 12 ամիսների ռոճիկները | | | 4,635 | |
| **Դպրոցական պիտոյքների հաշիւ** | | | | |
| Դպրոցական պիտոյքներ գործածուած ուսումն. տարւոյս ընթացքում . . . . . | | | 291 | 60 |
| **Մանր ծախուց հաշիւ** | | | | |
| Վճարուած զանազան մանր իրերի գին, դպրոցները ջրելու վարձ ևայլն . . . | | | 1,374 | 40 |
| **Տոկոսի հաշիւ** | | | | |
| Վճարուած Յովսէփ Պօղոսխանեանի Բարեգործութեանց Աւանդին՝ 2000 թումանի 5½ ամսուայ տոկոս . . . . . | | | 275 | |
| **Պարտուց հաշիւ** | | | | |
| Վճարուած Յովսէփ Պօղոսխանեանի Բարեգործութեանց Աւանդի Պատ. Յանձնաժողովից առած պարտքը . . . . | | | 20,000 | |
| **Փոխարինաբար ստացուած գումարների հաշիւ** | | | | |
| Վճարուած Մեծ. պ. Մայիլ Ս. Եսայեանից առած գումարը . . | 10,000 | | | |
| » Առաջնորդական Խորհրդարանին . | 3,000 | | | |
| » 'Ի հաշիւ Արհեստագիտական դպրոցներից ստացուած գումարի . | 3,400 | | 16,400 | |
| **Բոլորան գիւղի հաշիւ** | | | | |
| Բոլորան գիւղի բերքը Ջուղա փոխադրելու վարձ և այլ ծախսեր . . . . | 11,041 | 75 | | |
| Գին 1 հատ եկեղեցական զանգի՝ նուէր դպրոցներիս կողմից . . . . | 1,050 | | 12,091 | 75 |
| **Զիգան գիւղի հաշիւ** | | | | |
| Զիգան գիւղի բերքը Ջուղա փոխադրելու վարձ և այլ ծախսեր . . . . . | 3,898 | 70 | | |
| Նոյն գիւղում դպրոցներիս բաժին ջրաղաց շինելու ծախք . . . . . | 848 | | 4,746 | 70 |
| **Զիգան գիւղի հարկի հաշիւ** | | | | |
| Վճարուած նոյն գիւղի 1914 և 1915 թ. հարկը | | | 1,623 | 40 |
| **Փոստի հաշիւ** | | | | |
| Վճարուած զանազան նամակների փոստի ծախքեր . . . . . . | | | 33 | 80 |
| Փոխադրելի | | | 111,121 | 65 |

## ՄՈՒՏՔ

| | Դռամ | Սենթ | Դռամ | Սենթ |
|---|---|---|---|---|
| Փոխադրուած | | | 58-972 | 40 |
| **Տօկոսի հաշիւ** | | | | |
| Ստացուած տեղւոյս Կայսերական Բանկից հանգ. Տէր Իսահակ Թ. Ամբարչեանի կտակած 1000 ռուբլեաց տոկոսը . . . . | 30 | | | |
| Հանգ. տիկին Սարրա Աշանեանի կտակած 1000 ռուբլեաց տոկոսը . . . . | 30 | | 60 | |
| **Հանգ. Գրիգոր Գասպարեանի հաշիւ** | | | | |
| Ստացուած վերոյիշեալի կտակած տան և այգու վարձերը . . . . | | | 570 | |
| **Բոլորան գիւղի հաշիւ** | | | | |
| Ստացուած Բոլորան գիւղի 1914 թուի ցորենի և գարու արդիւնքները . . . . | | | 26,743 | 60 |
| **Ջիգան գիւղի հաշիւ** | | | | |
| Ստացուած Ջիգան գիւղի 1914 թուի ցորենի և գարու արդիւնքները . . . . | | | 6:020 | 20 |
| **Հանգ. տիրուհի Բալասան Տէր Սարգսեանի հաշիւ** | | | | |
| Ստացուած հանգ. տիրուհու կտակած այգու 1914 թ. վարձը . . . . . | | | 140 | |
| **Պարտուց հաշիւ** | | | | |
| Ստացուած Յովսէփ Պօղոսխանեան Աւանդի Պատ. Յանձնաժողովից մուրհակով պարտք 3%-ով | | | 20,000 | |
| **Փոխարինաբար ստացուած գումարների հաշիւ** | | | | |
| Ստացուած Մեծ. պ. Մայիլ Ս. Եսայեանից . | 10,000 | | | |
| » Արհեստագիտական դպրոցներից . | 4,900 | | | |
| » Առաջնորդական Խորհրդարանից . | 3,000 | | 17,900 | |
| **Վաճառուած գետնի հաշիւ** | | | | |
| Վաճառուած «Ջավաթէնց» կոչուած տան կից դպրոցապատկան գետնից 330 գազ . . | | | 9,000 | |
| **Ձեռագործի հաշիւ** | | | | |
| Ստացուած աշակերտուհիների պատրաստած ձեռագործների վաճառքից . . . . | | | 437 | 25 |
| **Անձեռնմխելի գումարի հաշիւ** | | | | |
| Ստացուած Ռուսաց Զեղչատու Բանկից՝ այնտեղ անձեռնմխելի դարձրած՝ վաճառուած գետնի արժէքը . . . . . . | | | 9,000 | |
| Փոխադրելի | | | 148,843 | 45 |



## ԵԼՔ

| | Դռամ | Սենթ | Դռամ | Սենթ |
|---|---|---|---|---|
| Փոխադրուած | | | 111,121 | 65 |
| **Հեռագրի հաշիւ** | | | | |
| Զանազան հեռագիրների ծախք . . | | | 449 | 65 |
| **Հոգեւոր Դպրանոցի հաշիւ** | | | | |
| Վճարուած Հոգեւոր Դպրանոցի Բոլորան գիւղի 1/6 բաժնի (1 դօնգի) զուտ արդիւնքը . . | | | 2,617 | |
| **Տօնածառի հաշիւ** | | | | |
| Մանկական երեկոյթի և տօնածառի առթիւ ծախքեր . . . . . . | | | 700 | 80 |
| **Վառելիքի հաշիւ** | | | | |
| Դպրոցներիս համար վառելափայտի գին . | | | 2,399 | 10 |
| **Վիճակախաղի հաշիւ** | | | | |
| Յօգուտ «Իզմիրլեան ֆօնդի» շահած № 2133 տոմսակի գումարը ուղարկուած Ս. Էջմիածին Բագրատ Սրբազանի անունով . . . | | | 200 | |
| **Նորոգութեան հաշիւ** | | | | |
| Զանազան անհրաժեշտ նորոգութեանց ծախքեր դպրոցներում . . . . . | | | 2,832 | 10 |
| **Տպագրութեան հաշիւ** | | | | |
| Վճարուած Ս. Ամենափրկչեան Վանքի տպարանին զանազան տպագրութեան ծախքեր և թղթի գին . . . . . . | | | 640 | |
| **Մանկապարտէզի հաշիւ** | | | | |
| Թիֆլիսից բերուած մանկապարտէզի իրերի գին և ճանապարհածախք . . . . | | | 835 | 10 |
| **Քարտուղարի ռոճիկ** | | | | |
| Վճարուած հոգաբարձական քարտուղարի ռոճ. | | | 600 | |
| **Գետնավարձի հաշիւ** | | | | |
| Վճարուած կուսանաց Մենաստանին սոյն տարւայ գետնավարձը . . . . | | | 500 | |
| **Գետնահարկի հաշիւ** | | | | |
| Դպրոցներիս կալուածոց 1914 և 1915 թուերի հարկերը . . . . . . | | | 195 | 50 |
| **Նպաստից հաշիւ** | | | | |
| Մանկութիւն դպրոցներից՝ յօգուտ տաճկահայ գաղթականների հանգանակութեան . | 1,000 | | | |
| Վճարուած Ս. Ամենափրկչեան Վանքին զանազան ազգային անհրաժեշտ ծախքերի համար . | 500 | | 1,500 | |
| Փոխադրելի | | | 124,590 | 90 |

## ՄՈՒՏՔ

| | Ղրան | Սենթ | Ղրան | Սենթ |
|---|---|---|---|---|
| Փոխադրուած | | | 148,843 | 45 |
| Այլ եւ այլ մուտքեր | | | | |
| Վաճառուած 3 կտոր քար՝ 135 ղ. հում ադիւս՝ 21-50, մանկապարտէզի մի քանի խաղալիքներ՝ 11 ղ. 1 զոյգ անգործածելի դուռ՝ 12 ղ. | | | 179 | 50 |
| Անգլ. Բանկի հետ ունեցած հին հաշիւ | | | | |
| Ստացուած Սպահանի Կայսերական Բանկից՝ 1911 թուից ի վեր եղած հին ընթացիկ հաշուի Յաւելորդը . . . . . . | | | 13 | 95 |
| Գումարն է | | | 149,036 | 90 |

Ծանօթ. ա. Ուսումնարաններս ունէին առ մին Յունուարի 1915 ամի ի խնամս Ս. Յովհ. Եկեղ. Հայոց Բաթաւիոյ
կենտրոնականն . . . . . Գիլդր 10,300—
Ս. Կատարինեան օր. Դպր. . . . » 7,400—

բ. Ի խնամս Ս. Լուս. Եկեղ. Հայոց Սինկափուրայ Մաշկիլը 757—50

1 Օգոստոսի 1915 թ.

Հոգաբարձութիւն Ազգ.

Նախագահ՝

Ներկայացուցիչ ս. Վ. Քանանեանի՝

Գանձապահ՝

Անդամներ՝



## ԵԼՔ

| | Ղրան | Սենթ | Ղրան | Սենթ |
|---|---|---|---|---|
| Փոխադրուած | | | 124,590 | 90 |
| Անձեռնմխելի գումարի հաշիւ | | | | |
| Սպահանի Ռուսաց Զեղչատու Բանքում անձեռնմխելի դարձրած՝ վաճառուած 330 գազ գետնի արժէքը . . . . . . | | | 9,000 | |
| Ճանապարհածախսի հաշիւ | | | | |
| Վճարուած պ. և տ. Ժամկոչեաններին Թիֆլիսից—Սպահան ճանապարհածախսը . . | | | 1,665 | 55 |
| պ. եւ տ. Ժամկոչեանների ռոճիկի հաշիւ | | | | |
| Վճարուած ի հաշիւ 1915—16 ուս. տարուայ ռոճիկների . . . . . . | | | 1,605 | 70 |
| Ղարղուն գիւղի կալուածի գնման հաշիւ | | | | |
| 3 հաբբա կալուածք՝ գնուած դպրոցներիս համար Ղարղուն գիւղից, վաճառուած 330 գազ գետնի՝ 9000 ղրան գումարով, մնացեալն ևս հոգալով դպրոցներիս միջոցներից . . | | | 11,688 | 15 |
| Մնայ առ 1-ն Օգոստոսի 1915 թ. պատրաստ | | | 486 | 60 |
| Գումարն է | | | 149,036 | 90 |

գ. Սպահանի Կայսերական Բանքում Գէորգ Քանանեան Դպրոցի և մանկապարտէզի դրամագլուխը ղրան 250,000—
Հանգ. տ. Սարրա Աղանեանի կտակածը » 1,000—
» Տէր Իսահակ Թ. Ամբարչեանի կտակածը » 1,000—

դ. Մակասարի Մեծապ. Միքայէլ Ստեփաննոս և Ընկերութեան վաճառատանը հանգ. Աւետիք Ն. Կրէտեանի կտակած գումարը . . . Գիլդր 6,507—70

Ի Նոր—Ջուղա

Երկսեռ դպրոցների

Եղնիկ վարդապետ Երկարակեցեան

Մ. Ս. Գ. Աղանուր

Ներսէս Դաւթեան

Ա. Աթայեան
Տրդատ Թ. Աբգարեան
Մինաս Յ. Միքայէլեան
Աղանուր Յ. Կարապետեան
Խ. Գ. Անտոնեան

## Հաշուեկշիռ Ել-և-մտից Ազգային Արհեստագիտական

### ՄՈՒՏՔ

| | Ղռան | Սենթ | Ղռան | Սենթ |
|---|---|---|---|---|
| Առ մին Օգոստոսի 1914 թ. պատրաստ . | | | 1,709 | 05 |
| **Կօշկակարանոցի բաժին** | | | | |
| Ստացուած կօշկակարանոցի 12 ամիսների մուտքը . . . . . . | | | 13,877 | |
| **Ջուլհականոցի բաժին** | | | | |
| Ստացուած Ջուլհականոցի 7 ամիսների մուտքը | | | 2,771 | 90 |
| **Երկաթագործարանի բաժին** | | | | |
| 2 հատ կառքերի վաճառումից գոյացուած . | | | 5,550 | |
| **Տոկոսի բաժին** | | | | |
| Ստացուած Մեծ. պ. պ. Աբգարեանց դրամագլխի ա. վեցամսեայ տոկոսները ռուփիք 623-13-4 | 2,323 | 75 | | |
| բ. » » » 622-15-10 | 2,520 | | 4,843 | 75 |
| **Պահանջի բաժին** | | | | |
| Ստացուած ի հաշիւ Ազգ. երկսեռ դպրոցներին փոխարինաբար վճարած գումարի . . | | | 3,400 | |
| Գումարն է | | | 32,151 | 70 |

1 Օգոստոսի 1915 թ.

Հոգաբարձութիւն Ազգ.

Նախագահ՝

Գանձապահ՝

Անդամներ՝



## Դպրոցների 10 Օգոստոսի 1914—ց'31 Յուլիսի 1915 ամի։

### ԵԼՔ

| | Ղռան | Սենթ | Ղռան | Սենթ |
|---|---|---|---|---|
| **Կօշկակարանոցի բաժին** | | | | |
| Վճարած կաշեգինաց գին . . . . | 7,456 | 10 | | |
| » Նիւթեղինաց » . . . . | 1,180 | 40 | | |
| » հաշուապահի, վարպետի և աշակերտների վարձեր . . . | 5,405 | | | |
| » մանր ծախքերի համար . . . | 68 | 20 | | |
| » Պօստի ծախք Թէհրանից կաշիներ բերելու համար . . . | 192 | 50 | | |
| » վառելիքի գին . . . . | 84 | 95 | | |
| » Նպաստ Մարտիրոս աշակերտին՝ կօշկակարանոցը թողնելիս . . | 150 | | 14,537 | 15 |
| **Ջուլհականոցի բաժին** | | | | |
| Վճարած մանածի գին . . . . | 512 | | | |
| » թել ոլորելու վարձ . . . | 58 | | | |
| » » ներկելու » . . . | 99 | 25 | | |
| » վարպետի և աշակերտների վարձեր . | 330 | 60 | | |
| » խանութպանի ռոճիկ՝ կտորները վաճառելու համար . . . | 260 | | | |
| » մանր ծախքերի համար . . . | 26 | 20 | 1,286 | 05 |
| **Երկաթագործարանի բաժին** | | | | |
| Վճարած պ. Թունի Յովհաննեսեանին 2 հատ կառքերի լրացման ծախքերի մնացորդը . . | 372 | | | |
| Միջնորդչէք կառքերից մէկը վաճառելու համ. | 100 | | 472 | |
| **Պահանջի բաժին** | | | | |
| Վճարած Ազգ. դպրոցներին փոխարինաբար . | | | 4,900 | |
| Բալանս առ մին Օգոստոսի 1915 թ. . . | | | 10,956 | 50 |
| Գումարն է | | | 32,151 | 70 |

ի Նոր—Ջուղա

Երկսեռ Դպրոցների

Եղնիկ վարդապետ Երկարակեցեան

Ներսէս Դաւթեան

Ա. Աթայեան
Տրդատ Թ. Աբգարեան
Մինաս Յ. Միքայէլեան
Աղանուր Յ. Կարապետեան
Խ. Գ. Անտոնեան

–42

Առաջնորդական Խորհրդարանս քննելով զելևմուտս Ազգային Երկսեռ Ուսումնարանաց Նոր-Ջուղայի, սկսեալ ի միոյ Օգոստոսի 1914 ց՚31 Յուլիս 1915 ամի, ուղիղ գտաւ, զորս վաւերացուցանէ ստորագրութեամբ Նախանդամոյ և Անդամոց իւրոց 17 Օգոստոսի 1915 ամի, ի Ս. Ամենափրկչեան Վանս Նոր—Ջուղայի։

Նախանդամ Խորհրդարանի՝ Եզնիկ վ. Երկարակեցեան

Անդամք » Եսայի քհնյ. Տէր Ս. Յովհաննսեան

Կարապետ քհնյ. Թումիկեան

20092
2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0053549